

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

0205 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՄՈՂՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

ԵՐԵՎԱՆ 2010

3. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների և մոդուլների անվանումը	Ատեսավորումը ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումը ըստ կուրսերի					
		Քննություն	Ստուգաթիվ	Կուրսային աշխատանք	Պարտադիր լսարանային բեռնվածություն				I կուրս		II կուրս		III կուրս	
					Ընդամենը	Այդ թվում			I կիսամյակ	II կիսամյակ	III կիսամյակ (18 շաբաթ)	IV կիսամյակ (18 շաբաթ)	V կիսամյակ (14 շաբաթ)	VI կիսամյակ (14 շաբաթ)
Տեսական ուսուցում	Լաբորատոր և գործնական աշխատանք	Մեմինար պարապմունք												
1	2	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ													
1.1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3,4		72	54	18				36	36		
1.2.	Տնտեսագիտության հիմունքները		4		54	40		14				54		
1.3.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		4		54	40		14				54		
1.4.	Իրավունքի հիմունքներ		3		36	36					36			
1.5.	Պատմություն		3		54	40		14			54			
1.6.	Ռուսաց լեզու		3,4		72		72				36	36		
1.7.	Օտար լեզու		3,4		72		72				36	36		
1.8.	Ֆիզիկական կուլտուրա		3,4,5,6		128		128				36	36	28	28
	Ընդամենը				542	210	290	42			234	252	28	28
2.	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ													
2.1.	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		4		18	18						18		
2.2.	Էկոլոգիայի հիմունքներ		3		36	30	6				36			
	Ընդամենը				54	48	6				36	18		
3.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ													
3.1.	Հաղորդակցության հմտություններ		3		36	18	18				36			
3.2.	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		4		72	36	36					72		
3.3.	Համակարգչային օպերատորության հմտություններ		3		54	18	36				54			
3,4.	Անվտանգություն և առաջին օգնություն		3		36	18	18				36			

	Ընդամենը				198	90	108				126	72		
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
4.1.	Հոգեբանության հիմունքները		3,4		132	78	54				66	66		
4.2.	Մոցիալական մանկավարժություն		4,5		102	78	24					36	66	
4.3.	Փաստաթղթաշրջանառություն և գործավարություն		3		72	32	40				72			
4.4.	Մոցիալական աշխատողի էթիկայի կանոնները		4		54	24	30					54		
4.5.	Մասնագիտական գործունեության իրավական ապահովումը		3,4		84	54	30				48	36		
	Ընդամենը				444	266	178				186	192	66	
5.	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
5.1.	Մոցիալական հետազոտությունների անցկացման մեթոդները		5		48	30	18						48	
5.2.	Մոցիալական աշխատանքի հիմունքները		3,4,5		168	84	84				56	48	64	
5.3.	Մոցիալական աշխատանքի ուղղությունները		5,6		84	44	40						42	42
5.4.	Մոցիալական դեպքի վարումը		5		84	32	52						84	
5.5.	Մոցիալական առողջապահության հիմունքները		6		36	22	14							36
5.6.	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական գործունեության ոլորտում		6		36	22	14							36
5.7.	Մոցիալական աշխատանքի և սոցիալական պաշտպանության պետական և ոչ պետական համակարգերը		4,5		120	76	44					42	78	
5.8.	Ընտանիքի և երեխաների հետ սոցիալական աշխատանքի կազմակերպման հիմունքները		6		84	48	36							84
5.9.	Տարեցների և հաշմանդամների հետ սոցիալական աշխատանքի կազմակերպման հիմունքները		6		84	46	38							84
5.10.	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց հետ սոցիալական աշխատանքի կազմակերպման հիմունքները		6		36	20	16							36
5.11.	Գործազուրկների հետ սոցիալական աշխատանքի կազմակերպման հիմունքները		6		66	38	28							66
5.12.	Մենեջմենթի հիմունքները		6		66	30	36							66
5.13.	Մարկեթինգ		5		54	28	26						54	
	Ընդամենը				966	520	446				56	90	370	450
	Ընտրովի դասընթացներ				54						-	18	18	18
	Պահուստային ժամեր				46						10	6	22	8
	Խորհրդատվություններ				200									
	Ընդամենը				2304	1134	1028	42			648	648	504	504
	Շաբաթվա ժամերի քանակը										36	36	36	36

N	VI ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ		N		VII ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻՆԱԵՐԻ ԵՎ ԱՐՋԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
1.	Տարիքային հոգեբանության հիմունքները				
2.	Սոցիալական աշխատանք հաշմանդամ երեխաների հետ			1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ
3.	Մարդու իրավունքի հիմնարար սկզբունքները			2	Օտար լեզվի
4.				3	Ընդհանուր հումանիտար առարկաների
5.				4	Անվտանգության և առաջին օգնության
6.				5	Անհատաան համակարգիչների
7.				6	Սոցիալական աշխատանքի կազմակերպման և գործնական հմտությունների զարգացման
				7	Հոգեբանության հիմունքների
	V ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ		ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
	Ուսումնական	4	6		
	Ուսումնական	5	5		ԱՐՋԵՍՏԱՆՈՑ
	Մասնագիտական	6	4		
	VI Ուսումնառության ամփոփիչ ատեստավորում				ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
	Երկու համալիր պետական քննություն ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական մոդուլներից Հունիսի 25-ից հուլիսի 15-ը ընկած ժամանակահատվածում:			1	Մարզադահլիճ
				2	Մարզահրապարակ

VIII ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Ուսանողի գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգաքնններ, ստուգողական աշխատանքներ: Խտուգաքնններն, այդ թվում տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգաքննների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորված առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի յուրաքանչյուրում առնվազը 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացները կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքների ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը հաստատում տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
 5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոխել՝ պարտադիր պահպանելով տեսական ու գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում: Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաթինետներ, մասնագիտացված լսարաններ:

Ա Ռ Ա Ն Ց Ք Ա Յ Ի Ն Հ Մ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը « Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Մ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր »

Մողուլի դասիչը՝ ԸԱԳՀ 4 -10-001

Մողուլի նպատակը՝

Մողուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

Մողուլի տևողությունը՝	54 ժամ
Տեսական ուսուցում՝	24 ժամ
Գործնական պարապմունքներ՝	30 ժամ
Մուտքային պահանջները՝	Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մողուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.
2. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.
3. տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում.
4. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.
5. դրսևորի քննադատական մտածողություն.
6. կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:

Գնահատման կարգ.

Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների ավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների Կատարման չափանիշներ՝

- ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.
- բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.
- գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).
- դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

Գնահատման միջոց.

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բանավոր ներկայացնում իր կենսագրությունը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական ուսուցում՝	6 ժամ
Գործնական պարապմունք՝	6 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

Կատարման չափանիշներ՝

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում գործերընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.
- գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևերումներ.

դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

Գնահատման միջոց.

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ հարցերի նվազագույնը 60 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև տեսաֆիլմեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք՝ 3 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:

Կատարման չափանիշներ՝

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.

բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.

գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,

դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:

ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է գործընկերների նկատմամբ.

զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

Գնահատման միջոց.

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողն ըստ առաջադրված իրավիճակի ճիշտ է կառուցում միջանձնային հարաբերությունները, կարողանում է հանդես գալ թիմի անդամ՝ համագործակցելով մյուսների հետ, ճիշտ է կողմնորոշվում վիճահարույց հարցերում և դրանց տալիս է համապատասխան լուծումներ կամ պատասխաններ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվել ղեկավարի հետ:

Կատարման չափանիշներ՝

ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.

բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.

գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

Գնահատման միջոց.

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի՝ հանդես է բերում պատշաճ հարաբերություն դրսևորելու կարողություն:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք՝ 2 ժամ

Ուսումնառության արդյունք 5. Դրսևորել քննադատական մտածողություն:

Կատարման չափանիշներ՝

ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.

- բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.
- գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

Գնահատման միջոց.

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի՝ հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
 Գործնական պարապմունք՝ 3 ժամ

Ուսումնառության արդյունք 6. Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

Կատարման չափանիշներ՝

- ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.
- բ. ճիշտ է կազմում իր աշխատանքային պլանը (պայմանական աշխատանքային պլան).
- գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները.
- դ. բացահայտում և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում.
- ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.
- զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.
- է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:

Գնահատման միջոց.

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեսին դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը, ըստ առաջադրված իրավիճակի առաջարկում է պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
 Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ՀՕՀ 4 - 10 - 002

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:

Մոդուլի տևողությունը՝ 54 ժամ
 Տեսական ուսուցում՝ 10 ժամ
 Գործնական աշխատանք՝ 44 ժամ

Մուտքային պահանջներ.

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է իման և կարողնա կատարել՝

1. Իմանալ WORD ԾՐԱԳԻՐ (հիմնական տեղեկություններ):
2. Կատարել տեքստերի տարրական ֆորմատավորում:
3. Կարողանալ պահպանել փաստաթղթերը:
4. Կատարել աղյուսակների պատրաստում և խմբագրում:
5. Կատարել գրաֆիկական խմբագրում և նկարագարում:
6. Կատարել փաստաթղթերի տպագրում:
7. Կարողնալ աշխատել ինտերնետում:

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Իմանալ WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Կատարման չափանիշներ՝

- ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը,
- բ. բացել նոր փաստաթուղթ,
- գ. ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել՝ տեքստ (առանց ֆորմատավորման), մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ), սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ), թվանշաններ,
- դ. տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ,
- ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում,
- զ. փակել փաստաթուղթը,
- է. բացել առկա փաստաթուղթը,
- ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները:

Գնահատման միջոց.

Ուսանողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում նրա կառուցվածքը: Ուսանողին մուտքագրելու համար տրվում է 2-3 պարբերություններից բաղկացած, ամենաշատը 100 բառ, թվանշաններ և սիմվոլներ պարունակող տեքստ: Ուսանողը պետք է բացի նոր փաստաթուղթ, կատարի մուտքագրումը և պահպանի այն նախօրոք առաջարկված տեղում: Ուսանողը բացում է իր հավաքած և պահպանած փաստաթուղթը ու ցուցադրում է ստեղնաշարով տեքստային ցուցիչի տեղաշարժման հնարավորությունները: Ուսանողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե առաջադրանքն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում (որոշ անճշտություններ թույլատրելի են):

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	16 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Կատարել տեքստերի տարրական ֆորմատավորում:

Կատարման չափանիշներ՝

- ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,
- բ. նշել բառերը և տեքստային հատվածները,
- գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,
- դ. կատարել տողերի հավասարեցում,
- ե. փոխել միջտողային տարածությունները,
- զ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով,
- է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով,
- ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից,
- թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները,

- ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,
- ի. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը,
- լ. մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ,
- իւ. փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ,
- ծ. ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը,
- կ. ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ,
- հ. պատճենել տեքստը,
- ձ. տեղափոխել տեքստը,
- ղ. տողադարձել տեքստը,
- ճ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով:

Գնահատման միջոց.

Ուսանողին մուտքագրելու համար տրվում մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ: Ուսանողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ: Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված փաստաթուղթը և ցուցադրում է մկնիկով և ստեղնաշարով տեքստը նշելու հնարավորությունները: Ուսանողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Ուսանողը պետք է համակարգչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները: Ուսանողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները: Ուսանողը կատարում է տողադարձումներ իրեն տրված պատրաստի փաստաթղթի օրինակի վրա: Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հիմնական մասերով առաջադրանքները ճիշտ են կատարվում, սակայն հնարավոր են աննշան, ոչ էական բացթողումներ, վրիպակներ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ

- Տեսական ուսուցում՝ 4 ժամ
- Գործնական աշխատանք՝ 12 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Կարողանալ պահպանել փաստաթղթերը:

Կատարման չափանիշներ՝

- ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը,
- բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը,
- գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:

Գնահատման միջոց.

Ուսանողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ, մուտքագրի մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանի է այն՝ օգտագործելով Save As... պատուհանը: Կտրվի պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ ուսանողը պետք է կատարի փոփոխություններ: Կֆանձնարարվի է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում՝ առաջադրանքները ամբողջությամբ և առանց էական սխալներ կատարելու դեպքում:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անհրաժեշտ է իրականացնել անհատական համակարգիչների կաբինետում՝ ունենալով տարբեր փաստաթղթերի նմուշներ, որոնք անհրաժեշտ է ստեղծել և պահպանել:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

- Գործնական աշխատանք՝ 4 ժամ

Արդյունք 4. Կատարել աղյուսակների պատրաստում և խմբագրում.

Կատարման չափանիշներ՝

- ա. պատրաստել աղյուսակ,
- բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ,
- գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ,
- դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուններ աղյուսակի մեջ,
- ե. ջնջել աղյուսակի տողերը և սյունները,

- գ. փոխել այունակի լայնությունը մկնիկի օգնությամբ,
- է. փոխել տողի բարձրությունը մկնիկի օգնությամբ,
- թ. փոխել աղյուսակի գծերի գույնը,
- ժ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:

Գնահատման միջոց.

Ուսանողին տրվում է աղյուսակի տպագրված օրինակ: Ուսանողը պետք է պատրաստի աղյուսակը առաջարկված ձևով, մուտքագրի տեքստը, ֆորմատավորի աղյուսակը և տպագրի: Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված աղյուսակը և կատարում է ֆորմատավորման գործողություններ՝ պահպանելով վերջնական տարբերակը և տպագրում է: Գնահատումը կատարվում է տպագրված օրինակի հիման վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը կատարում է ճիշտ, սակայն թույլատրելի են նաև որոշ աննշան բացթողումներ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ աղյուսակների առավել տարածված և կիրառելի նմուշների օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական ուսուցում՝	1 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

Ուսումնառության արդյունք 5. Կատարել գրաֆիկական խմբագրում և նկարագրում.

Կատարման չափանիշներ՝

- ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ,
- բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,
- գ. գծագրել կանոնավոր պատկերներ,
- դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները,
- ե. տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ,
- զ. պատճենել,
- է. պտտել,
- ը. շրջել,
- թ. փոխել չափերը,
- ժ. խմբավորել գրաֆիկական օբյեկտները,
- ի. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ,
- լ. գծագրել տեքստային բլոկներ,
- խ. գունավորել գրաֆիկական օբյեկտները,
- ծ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները,
- կ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակ: Ուսանողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա: Կտրվի երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ, որի օրինակի վրա պետք է ցուցադրել պատկերների ֆորմատավորման գործողությունները:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ են կատարվում, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան թերություններ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների ձևով, անհատական համակարգիչների կաբինետում: Նպատակահարմար է ունենալ գրաֆիկական օբյեկտների նախապատրաստված ցանկ, որոնց հիման վրա աշխատելը հնարավորություն կտա ձեռք բերել արդյունքով սահմանված բոլոր կարողությունները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Գործնական աշխատանք՝	2 ժամ
---------------------	-------

Ուսումնառության արդյունք 6. Կատարել փաստաթղթերի տպագրում.

Կատարման չափանիշներ՝

- ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը,

բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները,

գ. տպագրել փաստաթուղթը:

Գնահատման միջոց.

Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն: Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական հանձնարարությունն ուսանողը կատարում է անսխալ, իսկ պատուհանի ֆունկցիաները բացատրելիս կարող է նաև որոշ անճշտություններ թույլ տալ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը իրականացվելու է գործնական պարապմունքի միջոցով՝ անհատական համակարգիչների կաբինետում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Գործնական պարապմունք՝ 2 ժամ

Ուսումնառության արդյունք 7. Կարողանալ աշխատել ինտերնետում.

Կատարման չափանիշներ՝

- ա. իմանալ ինտերնետ հասկացության նշանակությունը,
- բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը,
- գ. իմանալ ինտերնետային հասցե հասկացությունը,
- դ. իմանալ History հրամանի նշանակությունը,
- ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը,
- զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը,
- է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,
- թ. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,
- ժ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,
- ի. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,
- լ. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,
- խ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա,
- ծ. ճիշտ օգտվելով ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,
- կ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն,
- հ. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

Գնահատման միջոց.

Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել Internet Explorer ծրագրի պատուհանի կառուցվածքը, նրա հիմնական կոճակների նշանակությունը, ցուցադրել History և Favorites հրամանները և բացատրել: Հանձնարարվում է բացատրել Stop և Refresh հրամանների նշանակությունը, բացատրել Back և Forward կոճակների նշանակությունը, բացել որևէ ինտերնետային էջ և պատճենել տեքստային և գրաֆիկական տեղեկատվությունն այդ էջից: Կատարել տեղեկատվության որոնում որևէ թեմայի շուրջ՝ օգտագործելով ինտերնետային փնտրող ծառայությունները, բացել նախօրոք պատրաստված էլեկտրոնային փոստը:

Ուսանողը պետք է ցուցադրի էլեկտրոնային նամակների ուղարկման և ստացման գործողությունները, էլեկտրոնային փոստով ֆայլերի ուղարկման և ստացման քայլերը: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե կատարողական մակարդակով առաջադրանքը ճիշտ է կատարվում, սակայն թույլատրվում է տարբերակների ընտրության որոշ շեղումներ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում, որն ունի ինտերնետին միանալու հնարավորություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական ուսուցում՝ 1 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝
ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝
ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝

«ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՀՀ 4 – 10 - 001
36 ժամ
Տեսական պարապմունք՝ 12 ժամ
Գործնական աշխատանք՝ 24 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է այն ուսանողների համար, ովքեր կարիք ունեն զարգացնել և ամրապնդել հաղորդակցվելու իրենց ունակությունները: Սողուլը կարելի է ուսուցանել ինչպես մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այնպես էլ առանձին, քանի որ այն պարունակում է նաև ընդհանուր կրթության և անձի զարգացման համար կարևոր տարրեր: Դա նշանակում է, որ դասավանդողները պետք է խրախուսեն և կիրառեն ուսանողների ինքնաբացահայտման հնարավորությունների տարբեր մոտեցումներ, ինչպես օրինակ. դերային խաղերը, տեսանյութերը, մամուլի ուսումնասիրությունը և այլն: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կզարգացնի հաղորդակցության մի շարք կարևոր ունակություններ, ձեռք կբերի ինքնավստահություն, կկարողանա արդյունավետ և ակտիվ կերպով հաղորդակցվել ոչ միայն աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, այլև՝ անձնական կյանքում, ուղղորդել և ղեկավարել այլոց աշխատանքը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա սահմանել ուսումնառության անձնական նպատակները,
2. կարողանա կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին բանավոր/գրավոր տեղեկատվական հաղորդումներ,
3. կարողանա նախաձեռնել, պահպանել ու եզրափակել երկխոսություններ և քննարկումներ,
4. կարողանա մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, գծապատկերներ, քարտեզներ և նկարներ,
5. կարողանա կատարել փաստաթղթավորում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է սահմանել ուսումնառության անձնական նպատակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,

բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,

գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել հակիրճ զեկույց, որի սահմաններում նա կարտահայտի իր պատկերացումներն անձնական ուսումնառության նպատակների, դրանց սահմանների և գործընթացների, ինչպես նաև ուսումնառության տարբեր ձևերի ու եղանակների մասին: Ուսանողի գրավոր խոսքը պետք է պարունակի առավելագույնը 50 բառ: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ սահմանված կատարման բոլոր չափանիշները բավարար իրականացնելու դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Հաղորդակցության մոդուլի գործնական ծրագրերը պետք է կազմված լինեն այնպես, որ մի շարք առաջադրանքների միջոցով կիրառվեն հաղորդակցության նպատակային և բազմազան գործածության փոխկապակցված հմտություններ: Այդ առաջադրանքները պետք է արտահայտեն ուսանողների մասնագիտական հետաքրքրությունը կամ լինեն ավելի ընդհանրական բնույթի: Խորհուրդ է տրվում, որպեսզի առաջադրանքները քննարկվեն և պլանավորվեն այնպես, որ գնահատման ենթակա արդյունքը ստեղծվի ընթացիկ աշխատանքներին զուգընթաց, այլ ոչ թե առանձին վարժության շրջանակում: Հաղորդակցության մոդուլի մեջ ուսումնառությունը և դասավանդումը պետք է լինեն ակտիվ և ուսանողակենտրոն: Ուսուցման ընթացքում պետք է բերվեն իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	2 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանում է կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին բանավոր/գրավոր տեղեկատվական հաղորդումներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը,
բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,
գ. տեղեկատվության առանձնացում (խմբավորումը կատարում է նպատակային),
դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում պատրաստել պարզ թեմաների ու տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ՝ բանավոր ու գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք ստուգելու նպատակով: Մասնավորապես, կհանձնարարվի որևէ պարզ թեմա և/կամ ոչ գեղարվեստական տեքստ, համաձայն որի ուսանողը պետք է կազմի մեկ կամ մի քանի մասից բաղկացած գրավոր հաղորդում՝ կատարելով համապատասխան բանավոր ներկայացում: Գրավոր խոսքը պետք է լինի հակիրճ, պարունակի առավելագույնը 50 բառ, իսկ բանավոր ներկայացումը պետք է տևի մեկ-երկու րոպե: Լրացուցիչ ժամանակ պետք է տրամադրվի նաև հարցերի համար: Ուսանողը պետք է իր կարծիքն արտահայտի ուրիշների կողմից հնչեցված տեսակետների կամ հարցերի վերաբերյալ: Անհրաժեշտ է կազմել համատեքստերի կամ օգտագործված աղբյուրների բնութագիր, ինչը կարող է ունենալ ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք: Կատարման բոլոր չափանիշները պետք է ձեռք բերվեն գրավոր և բանավոր խոսքի ընթացքում միաժամանակ:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնը նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՄՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք՝
Գործնական աշխատանք՝

2 ժամ
4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է նախաձեռնել, պահպանել ու եզրափակել երկխոսություններ և քննարկումներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ուկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը),
բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,
դ. կատարում է ճիշտ եզրափակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կներկայացվի որոշակի տեքստ, որը նկարագրում է որևէ ոչ միանշանակ իրավիճակ, խնդիր և/կամ գաղափար: Ուսանողը կընդգրկվի երկու և/կամ ավելի հոգուց կազմված խմբում, որի անդամներից մեկը կարող է հանդես գալ դասավանդողի դերում: Քննարկման համար տրվող առավելագույն ժամանակը 3 րոպե է (յուրաքանչյուր մասնակցի համար): Ուսանողը պետք է ամենաանհրաժեշտ տեղեկություն տա տեքստում առկա հարցերի մասին և խմբի անդամներին ներկայացնի իր տեսակետներն ու նկատառումները: Այն կարող է լինել մեկ տեսակի տեղեկատվություն և/կամ փաստացի նկարագրություն:

Գնահատման ժամանակ պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձվի ուսանողի կողմից դիմացինի տեսակետը լսելու և դրանից հետևություններ անելու հմտությանը: Անհրաժեշտ է կազմել համատեքստի կամ օգտագործված աղբյուրի բնութագիր, որը կարող է ունենալ ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք: Քննարկումն ըստ դասավանդողի հայեցողության կարող է փոխարինվել տրված թեմայով հարցազրույցի: Բոլոր կատարման չափանիշներն էլ պետք է ձեռք բերվեն մեկ առաջադրանքի շրջանակում:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանում է մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, գծապատկերներ, քարտեզներ և նկարներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,

բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզները և նկարներ,

գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կհանձնարարվի մեկնաբանել մեկական սխեմա, աղյուսակ, գծապատկեր, քարտեզ և նկար՝ դրանց մասին բանավոր հաղորդում կատարելուն վերաբերող ուսանողի հմտությունները ստուգելու նպատակով: Յուրաքանչյուր ներկայացում պետք է տևի միջինը 1 րոպե: Լրացուցիչ ժամանակ կտրամադրվի նաև հարցերի համար: Ուսանողը պետք է իր կարծիքն արտահայտի ուրիշների կողմից հնչեցված տեսակետի կամ հարցերի վերաբերյալ: Անհրաժեշտ է կազմել համատեքստի բնութագիր, որը կարող է ունենալ ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, գծանկարների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, դիտակտիկ այլ նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	2 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կարողանում է կատարել փաստաթղթավորում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության,

բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,

գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կհանձնարարվեն կազմել տարբեր տեսակի փաստաթղթեր, ինչպիսիք են.
ա/ դիմում,

բ/ ինքնակենսագրություն (տրված տարբեր տեսակի ձևաչափերով),

գ/ պաշտոնական և ոչ պաշտոնական նամակներ,

դ/ արձանագրություն,

ե/ երաշխավորագիր,

զ/ վավերագիր և այլն:

Արդյունքը համարվում է ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարատեսակ փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր և դիտակտիկ այլ նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 2 ժամ
Գործնական աշխատանք` 4 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ`

«ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ`

ԱԱՕ 4 – 10 - 001

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`

36 ժամ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ`

Տեսական պարապմունք` 20 ժամ
Գործնական աշխատանք` 16 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ`

Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական

մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Այս մոդուլը մշակվել է արտադրական կազմակերպություններում և արտադրամասերում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողների մոտ գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման հմտություններ ձևավորելու նպատակով: Այն անհրաժեշտ է արտադրական ձեռնարկության / արտադրամասի բոլոր մակարդակների աշխատողներին:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. կարողանա ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
2. կարողանա տիրապետել կազմակերպություններում անվտանգության տեխնիկայի նորմերին և կանոններին,
3. կարողանա ներկայացնել արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները,
4. կարողանա ցուցաբերել առաջին բուժօգնություն:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանալ ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը,
- բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը,
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը,
- դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները,
- ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը,
- զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը` աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կառաջադրվեն որոշարկված հարցեր աշխատանքի պաշտպանության բնագավառում գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում ու կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	6 ժամ
Գործնական աշխատանք`	0 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանալ տիրապետել կազմակերպություններում անվտանգության տեխնիկայի նորմերին և կանոններին :

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,
- բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը,
- գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները,
- դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կտրվի թեսթ` ոչ պակաս 10 հարցով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից ճիշտ է մեկը: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	6 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանալ ներկայացնել արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները,
- բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները,
- գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,
- դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Օգտվելով գրականությունից, ուսանողը պետք է կարողանա գտնել հարցերի ճիշտ պատասխանները, իսկ ըստ իրավիճակների` նաև նորմաները: Բացի դրանից ուսանողը պետք է բավարար գրագիտություն ցուցաբերի այս կամ այն խախտման վնասակար և վտանգավոր հետևանքների վերաբերյալ:

Ստորև բերվում են արտադրական միկրոկլիմայի բաղադրիչները.

- ա. արտադրական միկրոկլիմայի բաղադրիչներ`
 - ջերմաստիճանը
 - հարաբերական խոնավությունը
 - փոշու առկայությունը
- բ. սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչներ`
 - օդափոխություն
 - ջեռուցում
 - ջրամատակարարում, ջրահեռացում և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսումնական գործընթացում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական և նորմատիվային տեղեկատվական գրականություն, գործիքներ ու սարքավորումներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքներն անցկացնել արտադրամասում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանալ ցուցաբերել առաջին բուժօգնություն: ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը,
- բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը,
- գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ,
- դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները,
- ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը,
- զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին բուժօգնություն ցուցաբերելու կարգը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ցուցաբերվի ճիշտ առաջին բուժօգնություն:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	2 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Մ Ա Ս Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ՄԱ – 4 – 10 – 001

Մոդուլի նպատակը.

Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ հոգեբանական գործընթացների, դրանց բնույթի, մեխանիզմների և դրսևորման օրինաչափությունների մասին:

Մոդուլի տևողությունը՝ 132 ժամ

Տեսական պարապմունքներ՝ 78 ժամ

Գործնական աշխատանք՝ 54 ժամ

Մուտքային պահանջներ.

Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Տիրապետի հոգեբանություն գիտության առարկային, մեթոդներին և խնդիրներին:
2. Տիրապետի անձի և գործունեության կառուցվածքի մասին գիտելիքներին:
3. Ունենա անհրաժեշտ գիտելիքներ իմացական գործընթացների վերաբերյալ:
4. Ունենա անհրաժեշտ գիտելիքներ հուզականային գործընթացների վերաբերյալ:

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Տիրապետել հոգեբանություն գիտության առարկային, մեթոդներին և խնդիրներին.

Կատարման չափանիշներ՝

ա. Ճիշտ է սահմանում հոգեբանություն գիտությունը,

բ. Ճիշտ է ներկայացնում հոգեբանության առարկան,

գ. Ճիշտ է ներկայացնում հոգեբանության հիմնական մեթոդները,

դ. Ճիշտ է ներկայացնում հոգեբանության կողմից լուծվող հիմնական խնդիրները,

ե. Ճիշտ է ներկայացնում հոգեբանության դերը սոցիալական սպասարկման գործում:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային առաջադրանքի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ա.Ա. Նալչաջյան - Ընդհանուր հոգեբանության հիմունքներ: Երևան, 1991, 512 էջ: Ա.Ա. Նալչաջյան - Հոգեբանության հիմունքներ: Երևան, 1997, էջ 446: Ա.Ա. Նալչաջյան - Սոցիալական հոգեբանություն: Երևան, Զանգակ-97, 2004, 432 էջ):

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ՝ 24 ժամ

Գործնական աշխատանք՝ 18 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Տիրապետում է անձի և գործունեության կառուցվածքի մասին գիտելիքներին.

Կատարման չափանիշներ՝

ա. Ճիշտ է ներկայացնում անձի կառուցվածքը,

բ. Ճիշտ է ներկայացնում գործունեության կառուցվածքը:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 10 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ա.Ա. Նալչաջյան - Ընդհանուր հոգեբանության հիմունքներ: Երևան, Լույս , 1991, 512 էջ: Ա.Ա. Նալչաջյան - Հոգեբանության հիմունքներ: Երևան, 1997, էջ 446: Ա.Ա. Նալչաջյան - Սոցիալական հոգեբանություն: Երևան, Զանգակ-97, 2004, 432 էջ):

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ՝ 18 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Ունի անհրաժեշտ գիտելիքներ իմացական գործընթացների վերաբերյալ.

Կատարման չափանիշներ՝

ա. Ճիշտ է ներկայացնում իմացական գործընթացները՝ զգայություն, ընկալում, ուշադրություն,

բ. Ճիշտ է ներկայացնում իմացական գործընթացները՝ հիշողություն, մտածողություն,

երևակայություն:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 10 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ա.Ա. Նալչաջյան - Ընդհանուր հոգեբանության հիմունքներ: Երևան, 1991, 512 էջ: Ա.Ա. Նալչաջյան - Հոգեբանության հիմունքներ: Երևան, 1997, էջ 446: Ա.Ա. Նալչաջյան - Սոցիալական հոգեբանություն: Երևան, Զանգակ-97, 2004, 432 էջ):

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ`	18 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Ունի անրաժեշտ գիտելիքներ հուզականալին գործընթացների վերաբերյալ.

Կատարման չափանիշներ`

ա. Ճիշտ է ներկայացնում մարդու հույզերն ու զգացմունքները,

բ. Ճիշտ է դասակարգում մարդկանց ըստ խառնվածքների, ներկայացնում յուրաքանչյուր տիպի առանձնահատկությունները:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 10 հարցից բաղկացած թեստային առաջադրանք և գործնական առաջադրանք` երեք տարբեր մարդկանց խառնվածքների նկարագրով: Ուսանողը պետք է ըստ խառնվածքների ճիշտ դասակարգի այդ մարդկանց:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80 %-ին, ինչպես նաև կատարել է գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ա.Ա. Նալչաջյան - Ընդհանուր հոգեբանության հիմունքներ: Երևան, 1991, 512 էջ: Ա.Ա. Նալչաջյան - Հոգեբանության հիմունքներ: Երևան, 1997, էջ 446: Ա.Ա. Նալչաջյան - Սոցիալական հոգեբանություն: Երևան, Զանգակ-97, 2004, 432 էջ), տարբեր մարդկանց խառնվածքների նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ`	18 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 – 10 – 002

Մոդուլի նպատակը.

Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տեսական պատկերացումներ սոցիալական մանկավարժության ուսումնասիրության օբյեկտի, առարկայի և հիմնական հասկացությունների մասին, ամբողջական պատկերացում տալ երեխայի (անհատի) սոցիալականացման գործընթացների և օրինաչափությունների մասին, ձևավորել գործնական հմտություններ երեխաների, տարբեր խմբերի, ընտանիքի հետ սոցիալ-մանկավարժական գործունեության իրականացման համար:

Մոդուլի տևողությունը` **102 ժամ**

Տեսական պարապմունքներ`	78 ժամ
Գործնական աշխատանք`	24 ժամ

Մուտքային պահանջներ.

Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է`

1. Կարողանա է ներկայացնել սոցիալական մանկավարժությունը` որպես գիտաճյուղ.
2. Ճիշտ բնութագրի սոցիալ-մանկավարժական գործընթացը.
3. Տիրապետի սոցիալականացման, սոցիալական հարմարման և սոցիալական դաստիարակության մասին գիտելիքին.
4. Տիրապետի սոցիալ-մանկավարժական գործունեության հիմունքներին.
5. Տիրապետի սոցիալական մանկավարժի էթիկային.

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Կարողանում է ներկայացնել սոցիալական մանկավարժությունը՝ որպես գիտաճյուղ:

Կատարման չափանիշներ՝

ա. ճիշտ է սահմանում սոցիալական մանկավարժության առարկան և խնդիրները,

բ. ճիշտ է ներկայացնում սոցիալական մանկավարժության ծագման պատմա-մշակութային նախադրյալները,

գ. ճիշտ է ներկայացնում սոցիալական մանկավարժի մասնագիտական գործունեությունը,

դ. ճիշտ է ներկայացնում Հայաստանում սոցիալական մանկավարժի ինստիտուտի կայացման նախադրյալները,

ե. ճիշտ է ներկայացնում սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների մասին հայ մանկավարժների մոտեցումները:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 5 հարցից բաղկացած ստուգողական գրավոր աշխատանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել առաջադրված հարցերի նվազագույնը 80 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Հ.Հ. Օհանյան - Սոցիալական մանկավարժության մի քանի հարցեր: Երևան Եզեա, 2006, 62 էջ: Ա.Ա. Նալչաջյան - Սոցիալական հոգեբանություն: Երևան, Զանգակ-97, 2004, 432 էջ):

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ՝ 18 ժամ

Ուսումնառության արդյունք 2 Սոցիալ-մանկավարժական գործընթացի ճիշտ բնութագրում:

Կատարման չափանիշներ՝

ա. ճիշտ է ներկայացնում սոցիալական մանկավարժությունը մարդու մասին գիտելիքների համակարգում,

բ. ճիշտ է ներկայացնում սոցիալական մանկավարժության փոխադարձ կապը մանկավարժության և սոցիոլոգիայի հետ,

գ. ճիշտ է ներկայացնում սոցիալական մանկավարժությունը որպես պրակտիկ գործունեության ոլորտ,

դ. ճիշտ է ներկայացնում սոցիալական մանկավարժի և սոցիալական աշխատողի գործունեության փոխադարձ կապը,

ե. ճիշտ է կարողանում համեմատել մանկավարժական և սոցիալ-մանկավարժական գործունեությունը:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 5 հարցից բաղկացած ստուգողական գրավոր աշխատանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել առաջադրված հարցերի նվազագույնը 80 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Հ.Հ. Օհանյան - Սոցիալական մանկավարժության մի քանի հարցեր: Երևան Եզեա, 2006, 62 էջ: Ա.Ա. Նալչաջյան - Սոցիալական հոգեբանություն: Երևան, Զանգակ-97, 2004, 432 էջ):

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ՝ 18 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Տիրապետում է սոցիալականացման, սոցիալական հարմարման և սոցիալական դաստիարակության մասին գիտելիքին.

Կատարման չափանիշներ՝

ա. ճիշտ է սահմանում սոցիալականացումը, սոցիալականացման գործընթացը,

բ. ճիշտ է բնութագրում սոցիալականացման օրինակաչափությունները,

գ. ճիշտ է ներկայացնում անձի սոցիալականացման հիմնական ինստիտուտները (ընտանիք, կրթություն, կրոն, մշակույթ),

ե. ճիշտ է սահմանում և բնութագրում սոցիալական ադապտացիան (հարմարումը),

զ. ճիշտ է ներկայացնում դաստիարակության և ինքնադաստիարակության դերը անձի սոցիալականացման գործում,

է. ճիշտ է ներկայացնում սոցիալական դաստիարակության խնդիրները,

ը. ճիշտ է ներկայացնում դաստիարակության և սոցիալական դաստիարակության առանձնահատկությունները,

թ. ճիշտ է ներկայացնում սոցիալականացման դերը՝ անձի զարգացման գործընթացում:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել առաջադրված հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Հ.Հ. Օհանյան - Սոցիալական մանկավարժության մի քանի հարցեր: Երևան Եգեա, 2006, 62 էջ: Ա.Ա. Նալչաջյան - Սոցիալական հոգեբանություն: Երևան, Չանգակ-97, 2004, 432 էջ):

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ՝ 12 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Տիրապետում է սոցիալ-մանկավարժական գործունեության հիմունքներին.

Կատարման չափանիշներ՝

ա. ճիշտ է սահմանում սոցիալ-մանկավարժական գործունեության մեթոդիկական և տեխնոլոգիան,

բ. ճիշտ է ներկայացնում սոցիալական հետազոտության մեթոդներների օգտագործումը սոցիալական մանկավարժության մեջ,

գ. ճիշտ է ներկայացնում սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների բնութագիրը և կառուցվածքը,

դ. ճիշտ է ներկայացնում ընտանիքի հետ սոցիալ-մանկավարժական գործունեության ձևերը,

ե. ճիշտ է բնութագրում շեղումը՝ որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր,

զ. ճիշտ է ներկայացնում ալկոհոլիզմը, թմրամոլությունը որպես անձի շեղված վարքի արտահայտման ձև,

է. ճիշտ է ներկայացնում մանկական մարմնավաճառությունը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր,

թ. ճիշտ է ներկայացնում է անչափահասների կատարած հանցագործությունը՝ որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր,

ժ. ճիշտ է ներկայացնում անչափահաս իրավախախտների հետ սոցիալ-մանկավարժական գործունեության առանձնահատկությունները,

ժա. ճիշտ է ներկայացնում դպրոցը որպես կարևոր սոցիալական ինստիտուտ:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային վարժություն և գործնական առաջադրանք, որում մի դեպքում կներկայացվի ընտանիք, մյուս դեպքերում հոգեբանական շեղումներով, ալկոհոլիզմով, թմրամոլությամբ և այլ շեղումներով անձանց, մանկական մարմնավաճառությամբ, անչափահաս իրավախախտների կյանքի նկարագրերից երեք կամայական նկարագրեր:

Ուսանողը պետք է ընտրի համապատասխան աջակցության համար սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիական գործընթացներ և նկարագրի սոցիալական աջակցության քայլերը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել առաջադրված հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ է կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Հ.Հ. Օհանյան - Սոցիալական մանկավարժության մի քանի հարցեր: Երևան Եզեա, 2006, 62 էջ: Ա.Ա. Նալչաջյան - Սոցիալական հոգեբանություն: Երևան, Ջանգակ-97, 2004, 432 էջ), ինչպես նաև համապատասխան նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ՝ 12 ժամ
Գործնական աշխատանք՝ 16 ժամ

Ուսումնառության արդյունք 5. Տիրապետում է սոցիալական մանկավարժի էթիկային.

Կատարման չափանիշներ՝

ա. ճիշտ է ներկայացնում սոցիալական մանկավարժի աշխատանքային էթիկայի սկզբունքները,

բ. ճիշտ է ներկայացնում սոցիալական մանկավարժի աշխատանքի մասնագիտական արժեքները,

գ. ճիշտ է կարողանում ներկայացնել և մեկնաբանել առանձին էթիկական խնդիրներ,

դ. կարողանում է ճիշտ ելքեր առաջարկել էթիկական խնդիրների լուծման համար,

ե. գիտի էթիկական երկրնտրանքները,

զ. ճիշտ է կարողանում ներկայացնել էթիկական պատասխանատվության խնդիրը՝ սոցիալ-մանկավարժական գործունեություն իրականացնելիս:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի հինգ հարցից բաղկացած ստուգողական գրավոր աշխատանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել առաջադրված հարցերի նվազագույնը 80 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Հ.Հ. Օհանյան - Սոցիալական մանկավարժության մի քանի հարցեր: Երևան Եզեա, 2006, 62 էջ: Ա.Ա. Նալչաջյան - Սոցիալական հոգեբանություն: Երևան, Ջանգակ-97, 2004, 432 էջ):

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ՝ 18 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓԱՍՏԱԹՂԱՇԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 – 10 – 003

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ փաստաթղթաշրջանառության և գործավարության կազմակերպման վերաբերյալ, աշխատանքային գործունեության ընթացքում կազմակերպությունում ծագած խնդիրների ճիշտ ընկալելմանը և համապատասխան լուծումների առաջարկման համար:

Մոդուլի տևողություն

Տեսական պարապմունքներ՝ 32 ժամ

Գործնական պարապմունք՝ 40 ժամ

Մուտքային պահանջներ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է իմանա՝

1. Գիտի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը.
2. Գիտի «Վարչարարությանե հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը.
3. Գիտի փաստաթղթերի ձևակերպման պահանջները.

4. Գիտի կազմակերպական և կարգադրական բնույթի փաստաթղթերի տեսակները և դրանց ձևակերպման առանձնահատկությունները.
5. Գիտի գործավարությունում փաստաթղթերի հետ աշխատանքների կազմակերպման սկզբունքները.
6. Իմանա կազմակերպության գործունեությամբ առաջացող փաստաթղթերի արխիվացման և պահպանման կարգը.
7. Իմանա կադրային գործի վարման գործընթացի կազմակերպման գործնական դրսևորումները, հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները.

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1 . Գիտի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում իրավական ակտ հասկացությունը, էությունը և տեսակները,
- բ. Ճիշտ է ներկայացնում իրավական ակտերի համակարգերը,
- գ. Ճիշտ է ներկայացնում իրավական ակտերի նախագծերի պատրաստման ընթացակարգը,
- դ. Ճիշտ է ներկայացնում օրենսդրական տեխնիկայի կանոնները:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային և գործնական առաջադրանքներ, որտեղ ներկայացված կլինեն երեք տարբեր իրավական ակտեր: Ուսանողը՝ ըստ տեսակների պետք է ճիշտ դասակարգի առաջադրված իրավական ակտերը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ կատարում գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, իրավական ակտերի տարբեր նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ՝	4 ժամ
Գործնական աշխատանք	4 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Գիտի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը.

Կատարման չափանիշներ.

- ա. Ճիշտ է ներկայացնում օրենքով սահմանված վարչարարության հիմունքները և տալիս դրանց կիրառման վերաբերյալ, համապատասխան բացատրություններ,
- բ. Ճիշտ ներկայացնում վարչական վարույթի հարուցման, վարույթի ընթացքի և ավարտական փուլերը,
- գ. Ճիշտ է ներկայացնում վարչական ակտի տեսակները, դրանց ընդունման և կիրարկման կարգը,
- դ. Ճիշտ է ներկայացնում վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտի հետևանքով առաջացած նյութական պատասխանատվության դեպքերը:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային և գործնական առաջադրանքներ, որտեղ ներկայացված է վարչական վարույթի ընթացքի նկարագրություն: Նկարագրության համաձայն ուսանողը պետք է ձևակերպի վարչական ակտը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, վարչական վարույթների տարբեր նկարագրերի և ընդունված վարչական ակտերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ՝

4 ժամ

Գործնական աշխատանք

4 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Գիտի փաստաթղթերի ձևակերպման պահանջները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում փաստաթղթի էությունը, և նշանակությունը կառավարման համակարգում,
- բ. Ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի դասակարգումը և տեսակները,
- գ. Ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի ձևակերպման միասնական կարգը և դրա կիրառման անհրաժեշտությունը,
- դ. Ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի իրավական արժեքը,
- ե. Ճիշտ է ներկայացնում ծառայողական փաստաթղթերի յուրահատկությունները և սոցիալական պաշտպանության ոլորտում կիրառվող փաստաթղթերի ձևաթղթերը,
- զ. Ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային թղթակցության սկզբունքները, դրա առավելությունները և թերությունները:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, և տարբեր բնույթի փաստաթղթերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ

Տեսական պարապմունքներ՝

4 ժամ

Գործնական աշխատանք

4 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Գիտի կազմակերպական և կարգադրական բնույթի փաստաթղթերի տեսակները և դրանց ձևակերպման առանձնահատկությունները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում կազմակերպական բնույթի փաստաթղթերի (կանոնադրություններ, կարգեր, աշխատակարգեր) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները,
- բ. Ճիշտ է ներկայացնում կարգադրական բնույթի փաստաթղթերի (հրամաններ, կարգադրություններ, որոշումներ) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները,
- գ. Ճիշտ է ներկայացնում տեղեկատվական բնույթի թղթակցությունների (գրություններ, ակտեր, զեկուցագրեր, տեղեկանքներ, արձանագրություններ և այլն.) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները,
- դ. Ճիշտ է ներկայացնում անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերի (հրամաններ անձնակազմի վերաբերյալ, աշխատանքային պայմանագրեր, աշխատանքային գրքույկներ, անձնական թերթիկներ և այլն.) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները,
- ե. Ճիշտ է ներկայացնում գործատուի ներքին և անհատական իրավական ակտերի տեսակները :

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային և գործնական առաջադրանք, որտեղ ներկայացված է աշխատանքային իրավիճակի նկարագիր: Ուսանողը պետք է տրված նկարագրի հիման վրա կազմի կարգադրական, տեղեկատվական կամ անձնակազմի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերից որևէ երկուսը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապատառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն և տարբեր բնույթի փաստաթղթերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունքներ՝	4 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

Ուսումնառության արդյունք 5. Գիտի գործավարությունում փաստաթղթերի հետ աշխատանքների կազմակերպման սկզբունքները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում փաստաթղթաշրջանառության սկզբունքները,
- բ. Ճիշտ է ներկայացնում մտից ելից փաստաթղթերի, ներքին փաստաթղթերի, քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քանակի հաշվառման գրանցման սկզբունքները,
- գ. Ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի ինդեքսավորման, գրանցման ձևերն ու դրանց լրացման կարգը,
- դ. Ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի կատարման հսկողության նշանակությունը ու տեսակները,
- ե. Ճիշտ է ներկայացնում գործերի ձևակերպման, վարման, անվանակարգման սկզբունքները:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն և տարբեր բնույթի փաստաթղթերի, դրանց ինդեքսավորման, գրանցման և պահպանման ձևերն ու օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ՝	4 ժամ
Գործնական աշխատանք	4 ժամ

Ուսումնառության արդյունք 6. Իմանալ կազմակերպության գործունեությամբ առաջացող փաստաթղթերի արխիվացման և պահպանման կարգը.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում կազմակերպությունում փաստաթղթերի պահպանման կարգը,
- բ. Ճիշտ է ներկայացնում արխիվ հանձնելու համար փաստաթղթերի նախապատրաստման կարգը,
- գ. Ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի արժեքավորման չափանիշները և փորձագիտական արժեքավորման ընթացակարգը,
- դ. Ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի փորձաքննության իրականացման և այդ նպատակով փորձագիտական հանձնաժողովների կազմման կարգը,
- ե. Ճիշտ է ներկայացնում գործերի ձևավորման, ցուցակների կազմման և արխիվ հանձնելու կարգը:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, փաստաթղթերի արխիվացման մասին ՀՀ կառավարության ընդունած կարգերը և որոշումները, արխիվացման գործընթացի ժամանակ կազմվող փաստաթղթերի և օգտագործվող ձևաթղթերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ՝	4 ժամ
Գործնական աշխատանք	4 ժամ

Ուսումնառության արդյունք 7. Իմանալ կադրային գործի վարման գործընթացի կազմակերպման գործնական դրսևորումները, հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում աշխատանքային պայմանագիրը որպես աշխատանքային հարաբերությունների իրավական հիմք,

բ. Ճիշտ է ներկայացնում աշխատանքային պայմանագրի բովանդակությունը և պայմանագրի կողմերը,

գ. Ճիշտ է ներկայացնում աշխատանքային պայմանագրի ձևերը, տեսակները (անորոշ ժամկետով և որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիր) և կնքման կարգը,

դ. Ճիշտ է ներկայացնում թե ինչ է արձակուրդը, ինչպես նաև ամենամյա նվազագույն արձակուրդի տրամադրման, ամենամյա արձակուրդի տևողության որոշման, ամենամյա արձակուրդը մասերով տալու, չօգտագործված ամենամյա արձակուրդի դիմաց աշխատանքից ազատվելիս փոխհատուցում ստանալու և չվճարվող արձակուրդ ստանալու կարգերը,

ե. Ճիշտ է ներկայացնում թե ինչ է ծառայողական գործուղումը, ինչպես նաև ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման, գործուղման ծախսերի նվազագույն չափի և պետական ու համայնքային բյուջեների միջոցներից հատկացվող գործուղման ծախսերի նվազագույն և առավելագույն չափերի սահմանված կարգը,

զ. Ճիշտ է ներկայացնում թե ինչ է աշխատանքային կարգապահությունը, ինչպես նաև գործատուի և աշխատողի պարտականությունները աշխատանքային կարգապահության պահպանման ժամանակ,

է. Ճիշտ է ներկայացնում աշխատանքային կարգապահության խախտումների դեպքերը, ինչպես նաև գործատուի կողմից կիրառվող տույժերը և խրախուսանքները կապված աշխատանքային կարգապահության հետ:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք և երկու գործնական առաջադրանք: Առաջին առաջադրանքում համաձայն նախնական տվյալների ուսանողը կկազմի պայմանական աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի տեքստը: Երկրորդ առաջադրանքում կկատարի տրված պայմանների դեպքում գործուղման ծախսերի հաշվարկը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ կատարել երկու գործնական առաջադրանքները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, աշխատանքային պայմանագրերի օրինակներ, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, գործուղման ծախսերի և արձակուրդի տևողության հաշվարկման կարգերը հաստատված ՀՀ կառավարության կողմից, գործատուի ներքին կարգապահական կանոնների և տույժեր նշանակելու վերաբերյալ հրամանների օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ` 8 ժամ

Գործնական աշխատանք 12 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 – 10 – 004

Մոդուլի նպատակը Մոդուլը նախատեսված է սոցիալական սպասարկում մասնագիտությամբ սովորողների համար: Նրա նպատակն է սովորողին ծանոթացնել սոցիալական աշխատանքում ընդունված հիմնական արժեքներին և սկզբունքներին, ինչպես նաև նրա մոտ զարգացնել այդ արժեքներին ու սկզբունքներին համապատասխան մասնագիտական գործունեություն իրականացնելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը 54 ժամ

Տեսական պարապմունքներ` 24 ժամ

Գործնական աշխատանք 30 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է

1. Իմանա սոցիալական աշխատողների միջազգային հանրության կողմից ճանաչված և ընդունված մասնագիտական արժեքներն ու սկզբունքները:

2. Ունենա գիտելիքներ սոցիալական աշխատանքում հանդիպող էթիկական երկրնորանքների և նրանց հաղթահարման վերաբերյալ.

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Սոցիալական աշխատողների միջազգային հանրության կողմից ճանաչված և ընդունված մասնագիտական արժեքների ու սկզբունքների իմացություն.

Կատարման չափանիշներ

ա. հիմնավորում է սոցիալական աշխատանք մասնագիտության արժեքային ասպեկտը,
բ. ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատողների միջազգային ընկերության կողմից ընդունված էթիկական կոդեքսը,

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի երեք հարցից բաղկացած ստոգողական աշխատանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել ստոգողական աշխատանքի հարցերի նվազագույնը 80 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, սոցիալական աշխատողների միջազգային ընկերության կողմից ընդունված էթիկական կոդեքսը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված «Սոցիալական աշխատողի էթիկայի կանոնները» մեթոդական ուղեցույցը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ

Տեսական պարապմունքներ`	12 ժամ
Գործնական աշխատանք	12 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Գիտելիքներ սոցիալական աշխատանքում հանդիպող էթիկական երկրնտրանքների և նրանց հաղթահարման վերաբերյալ.

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքում հանդիպող էթիկական երկրնտրանքները,

բ. կարողանում է ելք գտնել էթիկական երկրնտրանքի վիճակներից,

գ. Կարողանում է պահպանել սահմանը անձնական և մասնագիտական արժեքների միջև:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի երեք հարցից բաղկացած ստոգողական աշխատանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել ստոգողական աշխատանքի հարցերի նվազագույնը 80 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ`	12 ժամ
Գործնական աշխատանք	18 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ»

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 –10- 005

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ, աշատանքի ընթացքում ծագած խնդիրների ճիշտ ընկալմանը և օրենքի շրջանակներում համապատասխան լուծումների առաջարկման համար:

Մոդուլի տևողությունը	84 ժամ
Տեսական պարապմունքներ	54 ժամ
Գործնական աշխատանք	30 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է

1. Իմանա սոցիալական աջակցության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները:
2. Իմանա Սոցիալական ապահովության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները:
3. Իմանա բնակչության զբաղվածության ապահովման ոլորտի սոցիալական պաշտպանության իրավական կարգավորման հիմունքները:

4. Իմանա երեխաների, կանանց և ընտանիքի սոցիալական պաշտպանության իրավական կարգավորման հիմունքները:

5. Իմանա տարեցների և հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական կարգավորման հիմունքները:

6. Իմանա կրթության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները:

7. Իմանա առողջապահության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները:

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Գիտի սոցիալական աջակցության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանվող հիմնական հասկացությունները (կյանքի դժվարին իրավիճակ, սոցիալական աջակցություն, և այլն),

բ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աջակցության նպատակը, սոցիալական աջակցության կազմակերպման և տրամադրման սկզբունքները,

գ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ծառայությունների հիմնական տեսակները և կատարում դրանց մեկնաբանումները,

դ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության, լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման մարմինների և տարածքային մարմինների լիազորությունները,

ե. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աջակցության խորհուրդների ձևավորման, իրավասությունները, գործունեության սկզբունքները,

զ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աջակցության ոլորտում աջակցության կարիք ունեցողների (հաճախորդների) իրավունքներն ու պարտականությունները,

է. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ծառայություններ մատուցող աշխատողների (սոցիալական աշխատողի և սոցիալական սպասարկողի) իրավունքները և պարտականությունները,

ը. Ճիշտ է ներկայացնում ընտանեկան նպաստի տրամադրման և դադարեցման հիմքերը և կարգը,

թ. Ճիշտ է ներկայացնում միանվագ դրամական օգնության տեսակները, տրամադրման և դադարեցման հիմքերը և կարգը:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը, «Ընտանեկան նպաստի տրամադրման կարգը», «Սոցիալական աջակցության խորհուրդների ձևավորման և գործունեության կարգը», սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների օինակելի կանոնադրությունը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	8 ժամ
Գործնական աշխատանք	4 ժամ

Ուսումնասիրության արդյունք 2. Գիտի սոցիալական ապահովության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում պետական կենսաթոշակային ապահովության և կենսաթոշակային ապահովագրության համակարգը,

բ. Ճիշտ է ներկայացնում կենսաթոշակային համակարգի պետական կառավարման լիազորմամբ իրավասությունները, կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման աղբյուրները,

գ. Ճիշտ է ներկայացնում կենսաթոշակների տեսակները, դրանց նշանակման, դադարեցման, վերականգնման և կարգը,

դ. Ճիշտ է ներկայացնում կենսաթոշակի հաշվարկման և վերահաշվարկման կարգերը,

ե. Ճիշտ է ներկայացնում անհատական (անձնավորված) հաշվառման կենսաթոշակային ապահովագրության համակարգը, այդ համակարգում հաճախորդի հաշվառվելու համար սահմանված անհատական տվյալները, համակարգից տեղեկատվություն ստանալու համար հաճախորդի իրավասությունները,

զ. Ճիշտ է ներկայացնում ապահովագրական ստաժ հասկացությունը և դրա հաշվարկման կարգը:

Գնահատման միջոցը՝

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, «Անհատական (անձնավորված) հաշվառման կենսաթոշակային ապահովագրության համակարգում քաղաքացիներին հաշվառվելու կարգը», սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային մարմինների օինակելի կանոնադրությունը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 6 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

Ուսումնասիրության արդյունք 3. Գիտի բնակչության զբաղվածության ապահովման ոլորտի սոցիալական պաշտպանության իրավական կարգավորման հիմունքները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում զբաղվածություն հանդիսացող գործունեության տեսակները, զբաղված և չզբաղված, աշխատանք փնտրող և գործազուրկ անձանց սահմանումները և տալիս համապատասխան պարզաբանումներ

բ. Ճիշտ է ներկայացնում աշխատանք փնտրող անձանց հաշվառումը, գործազուրկի կարգավիճակի կասեցումը, վերականգնումը, դադարեցումը, հաշվառումից հանումը, ինչպես նաև հարմար աշխատանք հասկացությունը և տալիս համապատասխան պարզաբանումներ

գ. Ճիշտ է ներկայացնում բնակչության պետական կարգավորման սկզբունքները, ամենամյա պետական ծրագրերի կառուցվածքը, կազմման և համաձայնեցման ընթացակարգերը

դ. Ճիշտ է ներկայացնում զբաղվածության պետական ծառայության լիազորությունները

ե. Ճիշտ է ներկայացնում համաձայնեցման կոմիտեների և գործատուների մասնակցությունը զբաղվածության պետական քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում:

Գնահատման միջոցը.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Գործազրկության նպաստի նշանակման, հաշվարկման, դադարեցման և վերականգնման կարգերը», զբաղվածության տարածքային մարմինների օինակելի կանոնադրությունը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	8 ժամ
Գործնական աշխատանք	4 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Գիտի երեխաների, կանանց և ընտանիքի սոցիալական պաշտպանության իրավական կարգավորման հիմունքները:

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության սկզբունքները,

բ. Ճիշտ է ներկայացնում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքները,

գ. Ճիշտ է ներկայացնում կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքները,

դ. Ճիշտ է ներկայացնում ամուսնության կնքման և դադարեցման, ամուսինների իրավունքների և պարտականությունների սկզբունքները,

ե. Ճիշտ է ներկայացնում ծնողների և զավակների իրավունքները և պարտականությունները,

զ. Ճիշտ է ներկայացնում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դաստիարակության սկզբունքները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ ընտանեկան օրենսգիրքը», երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամքի կենտրոնների օինակելի կանոնադրությունները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	10 ժամ
Գործնական աշխատանք	6 ժամ

Ուսումնառության արդյունք 5. Գիտի տարեցների և հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական կարգավորման հիմունքները:

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում տարեցների և հաշմանդամների կրթության, մասնագիտական վերապատրաստման և վերաորակավորման իրավունքները և դրանք իրականացնելու սկզբունքները,

բ. Ճիշտ է ներկայացնում տարեցների և հաշմանդամների աշխատանքային իրավունքների երաշխիքները,

գ. Ճիշտ է ներկայացնում տարեցներին և հաշմանդամներին ցույց տրվող սոցիալական օգնության սկզբունքները,

դ. Ճիշտ է ներկայացնում տարեցների և հաշմանդամների համար սոցիալական ենթակառուցվածքների մատչելիությունը,

ե. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամների հասարակական կազմակերպությունների իրավունքները, պարտականությունները, ինքնուրույն գործունեության և պետական կամ ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցության սկզբունքները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառների, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, «Հաշմանդամների

սոցիալական պաշտպանության մասին մասին» ՀՀ օրենքը, «Տարեցների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, տարեցներին շուրջօրյա և ցերեկային խնամքի կենտրոնների օինակելի կանոնադրությունները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	8 ժամ
Գործնական աշխատանք	4 ժամ

Ուսումնառության արդյունք 6. Գիտի կրթության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում կրթության բնագավառում օրենսդրության հիմնախնդիրները և մեկնաբանում բնագավառի հիմնական հասկացությունները և պետական քաղաքականությունը,

բ. Ճիշտ է մեկնաբանում կրթական համակարգի կառուցվածքը, ուսումնական հաստատությունների տիպերը, կրթության ձևերը և յուրաքանչյուր դեպքում շնորհվող որակավորումները,

գ. Ճիշտ է ներկայացնում հանրակրթական ծրագրերի տեսակները և դրանցից յուրաքանչյուրի (նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական) առանձնահատկությունները,

դ. Ճիշտ է ներկայացնում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության առանձնահատկությունները,

ե. Ճիշտ է ներկայացնում սոցիալական օգնության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին կրթության բնագավառում արտոնյալ ծառայությունների մատուցման պայմանները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, հանրակրթական և նախնական լրթական հաստատությունների օինակելի կանոնադրությունները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	8 ժամ
Գործնական աշխատանք	4 ժամ

Ուսումնառության արդյունք 7. Գիտի առողջապահության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամության կանխարգելման և բժշկական վերականգնման սկզբունքները,

բ. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամության ճանաչման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և հաշմանդամության ճանաչման գործընթացը,

գ. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամի հետ անհատական վերականգնողական ծրագրով աշխատանքների կազմակերպումը տարբեր` պետական և ոչ պետական կազմակերպությունների կողմից,

դ. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամների և տարեցների համար արտոնյալ պայմաններով սահմանված ծառայությունները և այդ ծառայությունները մատուցող կազմակերպությունների գործառույթները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ,

սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, հանրակրթական և նախնական լրթական հաստատությունների օինակելի կանոնադրությունները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ

Տեսական պարապմունքներ 6 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

Հ Ա Տ Ո Ւ Կ Մ Ա Ս Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Մ Ո Ղ ՈՒ Լ Ի ԱՆՎԱՆՈՒՄԸ « Ս Ո Ց Ի Ա Լ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Հ Ի Մ ՈՒՆ Ք Ն ԵՐԸ »

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 – 10 – 007

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել համալիր պատկերացում սոցիալական աշխատանքի՝ որպես մասնագիտական գործունեության, նրա տեսական հիմքերի, մեթոդների և ուղղությունների վերաբերյալ:

Մոդուլի տևողությունը 168 ժամ

Տեսական պարապմունքներ 84 ժամ

Գործնական աշխատանք 84 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

1. Սոցիալական աշխատանք մասնագիտության տեսական հիմքերի ներկայացում:
2. Սոցիալական աշխատանքի, որպես մասնագիտության, կայացման ընթացքի ներկայացում:
3. Իմանալ սոցիալական աշխատանքի հիմնարար արժեքներն ու սկզբունքները:
4. Գիտի սոցիալական աշխատանքի մեթոդները:
5. Զանազանում է բնակչության սոցիալապես խոցելի խմբերը, նրանց կարիքները և պաշտպանության տեխնոլոգիաները:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Սոցիալական աշխատանք մասնագիտության տեսական հիմքերի ներկայացում.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում հիմնավորում է սոցիալական աշխատանքի տարբեր սահմանումները,

բ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքը և որպես օգնող մասնագիտություն, և որպես գիտություն,

գ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի տեսական հիմքերը և մասնագիտության կապն այլ օգնող մասնագիտությունների հետ:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 5 հարցից բաղկացած ստուգողական առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել առաջադրանքի հարցերի նվազագույնը 80%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ

Տեսական պարապմունքներ 18 ժամ

Գործնական աշխատանք 18 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Սոցիալական աշխատանքի, որպես մասնագիտության, կայացման ընթացքի ներկայացում.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում կամավորության և բարեգործության դերը սոցիալական աշխատանքի զարգացման գործում,
- բ. Ճիշտ է ներկայացնում եկեղեցու դերը մասնագիտության զարգացման գործում,
- գ. Ճիշտ է ներկայացնում ոլորտի հայտնի գործիչների դերը մասնագիտության ձևավորման ու զարգացման գործում:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 5 հարցից բաղկացած ստուգողական առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել առաջադրանքի հարցերի նվազագույնը 80%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ

Տեսական պարապմունքներ	16 ժամ
Գործնական աշխատանք	16 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Իմանալ սոցիալական աշխատանքի հիմնարար արժեքներն ու սկզբունքները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքում ընդունված հիմնական արժեքներն ու սկզբունքները,

բ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքում հանդիպող էթիկական երկընտրանքներն ու դրանց հաղթահարման ուղիները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 5 հարցից բաղկացած ստուգողական առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել առաջադրանքի հարցերի նվազագույնը 80%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	16 ժամ
Գործնական աշխատանք	16 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Գիտի սոցիալական աշխատանքի մեթոդները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում անհատական սոցիալական աշխատանքի սկզբունքները,

բ. Ճիշտ է ներկայացնում խմբային սոցիալական աշխատանքի սկզբունքները,

գ. Ճիշտ է ներկայացնում համայնքային սոցիալական աշխատանքի սկզբունքները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 5 հարցից բաղկացած ստուգողական առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել առաջադրանքի հարցերի նվազագույնը 80%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	16 ժամ
Գործնական աշխատանք	16 ժամ

Ուսումնառության արդյունք 5. Ձանագանում է բնակչության սոցիալապես խոցելի խմբերը, նրանց կարիքները և պաշտպանության տեխնոլոգիաները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում երեխաների հետ սոցիալական աշխատանքի բովանդակությունն ու ձևերը,

բ. Ճիշտ է ներկայացնում տարեցների հետ սոցիալական աշխատանքի բովանդակությունն ու ձևերը,

գ. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամների հետ սոցիալական աշխատանքի բովանդակությունն ու ձևերը,

դ. Ճիշտ է ներկայացնում է իրավախախտների հետ սոցիալական աշխատանքի բովանդակությունն ու ձևերը:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 5 հարցից բաղկացած ստուգողական առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել առաջադրանքի հարցերի նվազագույնը 80%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, սլայդներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 18 ժամ

Գործնական աշխատանք 18 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 – 10 – 008

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողներին տալ տեսական գիտելիքներ սոցիալական աշխատանքի գործունեության ուղղությունների, աշխատանքային ոլորտների և առանձին խմբերի հետ սոցիալական աշխատանքի հնարավորությունների մասին:

Մոդուլի տևողությունը 84 ժամ

Տեսական պարապմունքներ 44 ժամ

Գործնական աշխատանք 40 ժամ

Մուտքային պահանջներ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄԱ – 4 – 10 – 007 «Սոցիալական աշխատանքի հիմունքները», մոդուլը:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է

1. Գիտի առողջապահության ոլորտում սոցիալական աշխատանքի հնարավորությունները.

2. Գիտի կրթության ոլորտում սոցիալական աշխատանքի հնարավորությունները.

3. Գիտի սոցիալական պաշտպանության համակարգում սոցիալական աշխատանքի հնարավորությունները.

4. Գիտի սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները առանձին սոցիալական խմբերի հետ աշխատանքում.

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Գիտի առողջապահության ոլորտում սոցիալական աշխատանքի հնարավորությունները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում առողջապահության ոլորտում սոցիալական ծառայությունների անհրաժեշտություն

բ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի խնդիրները առողջապահության ոլորտում

գ. Ճիշտ է ներկայացնում առողջապահության ոլորտի սոցիալական ծառայությունների տիպերը, մատուցվող ծառայությունների տեսակները

դ. Ճիշտ է բնութագրում հիվանդանոցային սոցիալական աշխատանքը

ե. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի գործընթացը առողջապահական ծառայությունում

զ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները սուր, քրոնիկ և թերմինալ հիվանդությունների դեպքում

է. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները հոգեկան առողջության ոլորտում:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք, ինչպես նաև գործնական առաջադրանք, որտեղ պայմանական ներկայացված կլինի հիվանդացում հայտնված քաղաքացու իրավիճակ: Ուսանողը մշակում և ներկայացնում է հիվանդանոցային պայմաններում անհրաժեշտ սոցիալական ծառայությունների շարքը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ա. Խաչատրյան-Սոցիալական ապահովության հիմունքները: Ուսումնական ձեռնարկ: Երևան, Ճարտարագետ, 2006, 124 էջ: Ա.Ա.Հովսեփյան - Սոցիալականի և հոգեբանականի հարաբերակցությունը: Երևան: ԵՊՀ հրատ., 1973, 323 էջ: Օ.Գ. Գրինինա, Պ. Լիսիցին - Սոցիալական հիգիենայի և առողջապահության կազմակերպում: Երևան, Լույս , 1979, 436 էջ:), հիվանդանոցային պայմաններում քաղաքացիների վիճակների նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	10 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Գիտի կրթության ոլորտում սոցիալական աշխատանքի հնարավորությունները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում կրթության ոլորտում սոցիալական ծառայությունների անհրաժեշտությունը

բ. Ճիշտ է ներկայացնում կրթության ոլորտում սոցիալական աշխատանքի խնդիրները

դ. Ճիշտ է ներկայացնում դպրոցական սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները, սոցիալական աշխատողի գործառույթները

ե. Ճիշտ է ներկայացնում նախադպրոցական հաստատությունների սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները, սոցիալական աշխատողի գործառույթները

զ. Ճիշտ է ներկայացնում հատուկ տիպի կրթադաստիարակչական հաստատություններում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները, սոցիալական աշխատողի գործառույթները

է. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները մեծահասակների կրթության կազմակերպման հարցում

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք և գործնական առաջադրանք, որտեղ ներկայացված է կրթական հաստատությունում գտնվող քաղաքացու իրավիճակը: Ուսանողը մշակում և ներկայացնում է կրթական հաստատությունում քաղաքացուն մատուցվող անհրաժեշտ սոցիալական ծառայությունների շարքը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ա. Խաչատրյան - Սոցիալական ապահովության հիմունքները:

Ուսումնական ձեռնարկ: Երևան, Ճարտարագետ, 2006, 124 էջ: Ա.Ա.Հովսեփյան - Սոցիալականի և հոգեբանականի հարաբերակցությունը : Երևան : ԵՊՀ հրատ., 1973, 323 էջ), կրթական հաստատությունում քաղաքացիների իրավիճակի նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 10 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Գիտի սոցիալական պաշտպանության համակարգում սոցիալական աշխատանքի հնարավորությունները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության համակարգի առանձնահատկությունները

բ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության համակարգի խնդիրները

դ. Ճիշտ է թվարկում սոցիալական պաշտպանության համակարգի շահառու խմբերին /նպատակային խմբերին/

ե. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատողի գործառույթները սոցիալական պաշտպանություն իրականացնելիս

զ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության համակարգի սոցիալական աշխատանքի բնութագիրը:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք և ևս երկու գործնական առաջադրանք, որոնցում ներկայացված կլինեն սոցիալական պաշտպանության կարիք ունեցող անհատ քաղաքացու և որևէ ընտանիքի իրավիճակներ: Ուսանողը մշակում և ներկայացնում է սոցիալական աշխատողի (սպասարկողի) գործառույթները՝ ահատ քաղաքացուն և ընտանիքին սոցիալական ծառայություններ մատուցելու գործընթացում:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապատառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ա. Խաչատրյան - Սոցիալական ապահովության հիմունքները: Ուսումնական ձեռնարկ: Երևան, Ճարտարագետ, 2006, 124 էջ: Ա.Ա.Հովսեփյան - Սոցիալականի և հոգեբանականի հարաբերակցությունը: Երևան: ԵՊՀ հրատ., 1973, 323 էջ), սոցիալական պաշտպանության կարիք ունեցող անհատ քաղաքացիների և ընտանիքների իրավիճակների նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 12 ժամ

Գործնական աշխատանք 12 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Գիտի սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները առանձին սոցիալական խմբերի հետ աշխատանքում.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները երեխաների հետ

բ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները ընտանիքների հետ

զ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները տարեցների հետ

դ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները հաշմանդամների հետ

ե. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները գործազուրկների հետ

զ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները երիտասարդների հետ:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 10 հարցից բաղկացած թեստային առաջադրանք և ևս գործնական երեք առաջադրանք: Առաջին առաջադրանքում տրված է սոցիալական դեպքի նկարագիրը՝ երեխաների կամ երիտասարդների, երկրորդում՝ ծերերի կամ հաշմանդամների, իսկ երրորդում՝ գործազուրկների վերաբերյալ: Ուսանողը յուրաքանչյուր դեպքի համար ներկայացնում է սոցիալական աշխատանքի քայլերը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80 %-ին և ճիշտ կատարել երեք գործնական առաջադրանքները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապատումներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ս. Խաչատրյան - Սոցիալական ապահովության հիմունքները: Ուսումնական ձեռնարկ: Երևան, Ճարտարագետ, 2006, 124 էջ: Ա.Ա.Հովսեփյան - Սոցիալականի և հոգեբանականի հարաբերակցությունը: Երևան: ԵՊՀ հրատ., 1973, 323 էջ:), հանրային առողջապահության կազմակերպությունների օրինակելի կանոնադրություններ և դրանց գործառնությունները համակարգող իրավական ակտեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	12 ժամ
Գործնական աշխատանք	12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՊՔԻ ՎԱՐՈՒՄ»

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 – 10 - 009

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ տեսական և գործնական գիտելիքներ սոցիալական դեպքի վարման մասին:

Մոդուլի տևողությունը	84 ժամ
Տեսական պարապմունքներ	32 ժամ
Գործնական աշխատանք	52 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՄԱ -4-10-003 «Փաստաշրջանառություն և գործավարություն», ՄԱ-4-10-004 «Սոցիալական էթիկայի կանոնները», ՄԱ -4-10-006 «Սոցիալական հետազոտությունների անցկացման մեթոդները», ՄԱ – 4 – 10 – 007 «Սոցիալական աշխատանքի հիմունքները» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է

1. Իմանա սոցիալական դեպքի վարման ընթացքը և փուլերը.
2. Կարողանա վարել սոցիալական դեպք՝ օրինակի վրա.

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Գիտի սոցիալական դեպքի վարման ընթացքը և փուլերը.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է սահմանում սոցիալական դեպքը,

բ. Ճիշտ է բաժանում սոցիալական դեպքի վարման գործընթացը ինքնուրույն փուլերի,

գ. Ճիշտ է բնութագրում դեպքի վարման յուրաքանչյուր փուլը:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն :

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	14 ժամ
-----------------------	--------

Ուսումնառության արդյունք 2. Կարողանում է վարել սոցիալական դեպք՝ օրինակի վրա.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է սահմանում այցելուի հիմնախնդիրը,
- բ. Ճիշտ է կազմում դեպքին միջամտության պլան,
- գ. Ճիշտ է ներկայացնում է միջամտության պլանի իրականացման քայլերը,
- դ. Ճիշտ է կատարում միջամտության արդյունքների գնահատում,
- ե. Ճիշտ է կատարում դեպքի գրանցում և նրա հետ կապված գրառումները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք և ևս երկու գործնական առաջադրանք: Առաջին առաջադրանքում տրված է սոցիալական դեպքի նկարագիրը, որի վերլուծության արդյունքում ուսանողը կազմում է միջամտության պլան, նախանշում միջամտության քայլերը: Երկրորդ առաջադրանքում նկարագրված է սոցիալական դեպքը և իրականացված միջամտությունը: Ուսանողը կատարում է միջամտության գնահատում, միջամտության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկում միջամտության այլ ձևեր:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ կատարել երկու գործնական առաջադրանքները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապատառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, հանրային առողջապահության կազմակերպությունների օրինակելի կանոնադրություններ և դրանց գործառնությունները համակարգող իրավական ակտեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	18 ժամ
Գործնական աշխատանք	32 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 – 10 - 010

Մոդուլի նպատակը. Մոդուլը նախատեսված է սոցիալական սպասարկում մասնագիտությամբ ուսանողների համար: Այն ուսանողին տալիս է գիտելիքներ՝ հանրային առողջապահության ոլորտում իրականացվող հիմնական գործընթացների վերաբերյալ:

Մոդուլի տևողությունը	36 ժամ
Տեսական պարապմունքներ	22 ժամ
Գործնական աշխատանք	14 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է

- 1. Իմանա հանրային առողջապահության կառուցվածքն ու հիմնական ծառայությունների տեսակները:
- 2 Իմանա հանրային առողջապահության ոլորտում կիրառվող կանխարգելիչ և վերականգնողական տեխնոլոգիաները:

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է.

Ուսումնառության արդյունք 1. Հանրային առողջապահության կառուցվածքի ու հիմնական ծառայությունների իմացություն.

Կատարման չափանիշներ

ա. ներկայացնում է հանրային առողջապահության կառուցվածքը,
բ. ներկայացնում է հանրային առողջապահության հիմնական խնդիրները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապատառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Օ.Գ. Գրինինա, Պ. Լիսիցին - Սոցիալական հիգիենայի և առողջապահության կազմակերպում: Երևան, Լույս, 1979, 436 էջ:), հանրային առողջապահության կազմակերպությունների օրինակելի կանոնադրություններ և դրանց գործառնությունները համակարգող իրավական ակտեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	8 ժամ
Գործնական աշխատանք	6 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Գիտելիքներ հանրային առողջապահության ոլորտում կիրառվող կանխարգելիչ և վերականգնողական տեխնոլոգիաների մասին.

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում հանրային առողջապահության ոլորտում իրականացվող կանխարգելիչ տեխնոլոգիաները,

բ. ճիշտ է ներկայացնում հանրային առողջապահության ոլորտում կիրառվող վերականգնողական տեխնոլոգիաները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապատառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Օ.Գ. Գրինինա, Պ. Լիսիցին - Սոցիալական հիգիենայի և առողջապահության կազմակերպում: Երևան, Լույս, 1979, 436 էջ:), կանխարգելիչ և վերականգնողական տեխնոլոգիաների վերաբերյալ պետական չափորոշիչներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	14 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ»

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 – 10 - 012

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ սոցիալական ոլորտի պետական և ոչ պետական համակարգերի կառուցվածքի, դրանց ենթակառուցվածքների ձևավորման և գործունեության վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա ճիշտ ընկալել և օրենքի շրջանակում համապատասխան լուծումներ առաջարկել՝ տվյալ կազմակերպություններում աշխատանքի կազմակերպման վերաբերյալ:

Մոդուլի տևողությունը	120 ժամ
Տեսական պարապմունքներ	76 ժամ
Գործնական աշխատանք	44 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է

1. Իմանա սոցիալական ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները:
2. Իմանա սոցիալական ոլորտի առանձին ճյուղերը և դրանց պետական համակարգի ենթակառուցվածքները:
3. Իմանա սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կազմակերպությունների կազմակերպչի րավական ձևերը:
4. Իմանա սոցիալական պաշտպանության ոլորտի ենթակառուցվածքների գործառնությունները:
5. Իմանա սոցիալական ոլորտի պետական և ոչ պետական կազմակերպությունների համագործակցության սկզբունքները և այդ ոլորտում պետական քաղաքականությունը.

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Իմանալ սոցիալական ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում կրթության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները,
- բ. Ճիշտ է ներկայացնում առողջապահության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները,
- գ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունը,
- դ. Ճիշտ է ներկայացնում ոչ պետական սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների նկատմամբ վարվող պետական քաղաքականության սկզբունքները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապատառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ս. Մարկոսյան, Ն. Գեղամյան. - Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: Երևան, Տիգրան Մեծ, 2006, 396 էջ:), կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում պետական ծրագրերի նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 16 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Իմանալ սոցիալական ոլորտի առանձին ճյուղերը և դրանց պետական համակարգի ենթակառուցվածքները.

Կատարման չափանիշներ

- ա. Ճիշտ է ներկայացնում կրթության համակարգը, նրա ենթակառուցվածքները և այդ համակարգում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները,
- բ. Ճիշտ է ներկայացնում առողջապահության համակարգը, նրա ենթակառուցվածքները և այդ համակարգում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները,
- գ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության համակարգը, նրա ենթակառուցվածքները և այդ համակարգում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ա. Մարկոսյան, Ն. Գեղամյան. - Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: Երևան, Տիգրան Մեծ, 2006, 396 էջ:), կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում պետական կազմակերպությունների տիպային կանոնադրությունների օրինակներ օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 12 ժամ

Գործնական աշխատանք 12 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Իմանալ սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերը.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» գործունեության և կառավարման սկզբունքները,

բ. Ճիշտ է ներկայացնում «Պետական առևտրային կազմակերպությունների» գործունեության և կառավարման սկզբունքները,

գ. Ճիշտ է ներկայացնում «Պետական հիմնադրամ կազմակերպությունների» գործունեության և կառավարման սկզբունքներ,

դ. Ճիշտ է ներկայացնում «Հասարակական կազմակերպության» գործունեության և կառավարման սկզբունքները,

ե. Ճիշտ է ներկայացնում «Բարեգործական կազմակերպության» գործունեության և կառավարման սկզբունքները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ա. Մարկոսյան, Ն. Գեղամյան. - Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: Երևան, Տիգրան Մեծ, 2006, 396 էջ:), պետական ոչ առևտրային, պետական առևտրային, պետական հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և բարեգործական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտեր և նմանատիպ ազմակերպությունների օրինակելի կանոնադրությունների օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 12 ժամ

Գործնական աշխատանք 12 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Իմանալ սոցիալական պաշտպանության ոլորտի ենթակառուցվածքների գործառույթները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում սոցիալական աջակցություն տրամադրող պետական կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,

բ. Ճիշտ է ներկայացնում գործազուրկների սոցիալական ծառայություններ մատուցող պետական կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,

գ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ապահովության ծառայություններ մատուցող պետական կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,

դ. Ճիշտ է ներկայացնում երեխաների խնամքի ծառայություններ մատուցող պետական կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,

ե. Ճիշտ է ներկայացնում տարեցների խնամքի ծառայություններ մատուցող պետական կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,

զ. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամներին սոցիալական ծառայություններ մատուցող պետական կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,

ը. Ճիշտ է ներկայացնում ընտանիքին և կանանց սոցիալական ծառայություններ մատուցող պետական կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ա. Մարկոսյան, Ն. Գեղամյան. - Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: Երևան, Տիգրան Մեծ, 2006, 396 էջ:), սոցիալական պաշտպանության ոլորտում բնակչությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունների (զբաղվածության կենտրոններ, սոցիալական աջակցության տարածքային մարմիններ, երեխաների խնամքի հաստատություններ, ծերերի խնամքի հաստատություններ և այլն) գործառույթներ կարգավորող իրավական ակտեր և օրինակելի կանոնադրությունների օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 18 ժամ

Գործնական աշխատանք 10 ժամ

Ուսումնառության արդյունք 5. Իմանալ սոցիալական ոլորտի պետական և ոչ պետական կազմակերպությունների համագործակցության սկզբունքները և այդ ոլորտում պետական քաղաքականությունը.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության ոլորտում «պետություն - ոչ պետական կազմակերպություն» համագործակցության սկզբունքները,

բ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության ոլորտում «պետական կազմակերպություն - ոչ պետական կազմակերպություն» համագործակցության սկզբունքները,

գ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության ոլորտում «պետական կազմակերպություն - քաղաքացի» համագործակցության սկզբունքները,

դ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության ոլորտում «ոչ պետական կազմակերպություն - քաղաքացի» համագործակցության սկզբունքները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 բաղկացած հարցից թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն (Ա. Մարկոսյան, Ն. Գեղամյան. - Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: Երևան, Տիգրան Մեծ, 2006, 396 էջ:), սոցիալական պաշտպանության ոլորտում «պետություն - ոչ պետական կազմակերպություն», «պետական կազմակերպություն - ոչ պետական կազմակերպություն», «պետական կազմակերպություն - քաղաքացի» և «ոչ պետական կազմակերպություն- քաղաքացի» համագործակցությունները կարգավորող իրավական ակտեր:

Ուսումնական երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ

18 ժամ

Գործնական աշխատանք

10 ժամ

**ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»**

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 – 10 - 011

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ սոցիալական պաշտպանության ոլորտում ներկայում գործող տեղեկատվական համակարգերի կառուցվածքի, փոխադարձ կապերի, սպասարկաման և տեղեկատվության մշակման հիմնախնդիրների վերաբերյալ:

Մոդուլի տևողությունը 36 ժամ

Դասախոսություն 22 ժամ

Գործնական պարապմունք 14 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՏՏ – 4 –10- 001 «Համակարգչային օպերատորության հիմունքներ» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Տիրապետում է ոցիալական պաշտպանության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների կառուցվածքին և համակարգի մեջ մտնող առանձին ենթահամակարգերի դերին և նշանակությանը:

2 Գիտի սոցիալական պաշտպանության ոլորտում էլեկտրոնային կառավարման համակարգի կազմավորման սկզբունքները.

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Տիրապետում է ոցիալական պաշտպանության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների կառուցվածքին և համակարգի մեջ մտնող առանձին ենթահամակարգերի դերին և նշանակությանը.

Կատարման չափանիշներ.

ա. Ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության տեղեկատվական տեխնոլոգիաների ընդհանուր կառուցվածք,

բ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ապահովության քարտերի տեղեկատվական համակարգի (ՏՀ) դերը և նշանակությունը,

գ. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամների հաշվառման «Փյունիկ»ՏՀ դերը և նշանակությունը,

դ. Ճիշտ է ներկայացնում զբաղվածության «Գործ» ՏՀ դերը և նշանակությունը,

ե. Ճիշտ է ներկայացնում անապահովության գնահատման «Նպաստ»ՏՀ դերը և նշանակությունը,

զ. Ճիշտ է ներկայացնում երեխաների ծննդյան միանվագ և մինչև երկու տարեկան երեխաների նպաստի «Նպաստ-2»ՏՀ դերը և նշանակությունը,

է. Ճիշտ է ներկայացնում նախկին ԽՍՀՄ խնայբանկի ավանդառուների հաշվառման «Ավանդ»ՏՀ դերը և նշանակությունը,

ը. Ճիշտ է ներկայացնում «Մանուկ» ՏՀ-ի «Մանկատուն»և «Որդեգրում»ենթահամակարգի դերը և նշանակությունը,

թ. Ճիշտ է ներկայացնում պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում ընդգրկված անձանց տվյալների անհատական (անձնավորված) հաշվառման "Պառնաս»ՏՀ դերը և նշանակությունը:

Գնահատման միջոցը Ուսանողին
կտրվի թեստային առաջադրանք բաղկացած 15 հարցից և գործնական առաջադրանք «Գործ»ՏՀ-ից
դուրս բերելու որոշակի ժամանակահատվածում գործազուրկների և թափուր աշխատատեղերի
վերաբերյալ տեղեկատվություն:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային
հարցերի ոչ պակաս քան 75 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների
համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ,
մասնագիտական գրականություն, համակարգչային տեխնիկա ինտերնետ կապով:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	12 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Գիտի սոցիալական պաշտպանության ոլորտում
էլեկտրոնային կառավարման համակարգի կազմավորման սկզբունքները.

Կատարման չափանիշներ.

ա. Ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային կառավարման սխեման և կառուցվածքը՝ ըստ
հորիզոնական կապերի և ուղղահայաց ենթակայության,

բ. Ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային կառավարման նպատակը և խնդիրները,

գ. Ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային կառավարման համակարգի հիմնական
ուղղությունները՝ - պետություն - պետություն, - պետություն - քաղաքացի կամ քաղաքացի -
պետություն, - պետություն - բիզնես կամ բիզնես - պետություն:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային
հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների
համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ,
մասնագիտական գրականություն, պետություն-պետություն, պետություն-քաղաքացի և պետություն-
բիզնես փոխհարաբերությունները կարգավորող իրավական ակտեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	10 ժամ
Գործնական աշխատանք	6 ժամ

**ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆՏԱՆԻՔԻ և ԵՐԵԱԱՆԵՐԻ ՀԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՇԱՍՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»**

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 –10– 013

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ և գործնական
կարողություններ երեխաների և ընտանքի հետ սոցիալական աշխատանքի գործընթացի և
առանձնահատկությունների վերաբերյալ, ծանոթացնել երեխաների սոցիալական պաշտպանություն և
սոցիալական աջակցություն իրականացնող հիմնական ծառայություններին:

Մոդուլի տևողությունը 84 ժամ

Դասախոսություն 48 ժամ

Գործնական պարապմունք 36 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է
ուսումնասիրած լինի ՄԱ – 4 – 09 – 007 «Սոցիալական աշխատանքի հիմունքներ», ՄԱ – 4 – 09 – 008
«Սոցիալական աշխատանքի ուղղություններ» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանա երեխաների հետ սոցիալական աշխատանքի մշակութային, պատմական և գիտական հիմքերը:

2. Իմանա հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաների խմբերը:

3. Իմանա երեխաների պաշտպանության հիմնական ծառայությունները:

4. Իմանա երեխայի և նրա անմիջական շրջապատի (ընտանիք, խնամողներ և այլն) հետ շփվելու, հաղորդակցվելու կարողությունները և կարողանալ դրանք գործնականում կիրառել:

5. Իմանա ընտանիքի հետ սոցիալական աշխատանքի հիմնական առանձնահատկությունները և կարողանալ ճանաչել և գնահատել ընտանիքը:

6. Կարողանալ ուսումնասիրել ընտանիքը և նրա հիմնախնդիրները:

7. Իմանալ ընտանիքին սոցիալական աջակցության տրամադրման սկզբունքները և կարողանալ գործնականում տրամադրել այդ աջակցությունը:

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Իմանալ երեխաների հետ սոցիալական աշխատանքի մշակութային, պատմական և գիտական հիմքերը:

Կատարման չափանիշներ.

ա. Ճիշտ է ներկայացնում մանկության խնդրի մշակութային, պատմական իրողությունը,

բ. տիրապետում է մանկության մասին սոցիալ-հոգեբանական, մանկավարժական տեսական գիտելիքներին,

գ. Ճիշտ է ներկայացում երեխայի հոգե-սոցիալական զարգացման փուլերի առանձնահատկությունները,

դ. Ճիշտ է ներկայացնում զարգացման տվյալ փուլին բնորոշ պահանջմունքները,

ե. Ճիշտ է սահմանում սոցիալական զարգացում հասկացողությունը:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 10 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 6 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Իմանալ հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաների խմբերը:

Կատարման չափանիշներ.

ա. Ճիշտ է սահմանում հատուկ պաշտպանության կարիքը,

բ. Ճիշտ է ներկայացնում հատուկ պաշտպանության կարիք ունեցող խմբերը ըստ կարիքի և ռիսկայնության աստիճանի,

գ. Ճիշտ է բնութագրում ռիսկայնության և կարիքավորության առանձին վիճակները և պահանջմունքներ:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 10 հարցից բաղկացած թեստային և գործնական առաջադրանք, որտեղ կներկայացվեն հինգ երեխաների կյանքի նկարագրերը: Ուսանողը պետք է առանձնացնի դրանցից պաշտպանության կարիք ունեցող և ռիսկայնության խմբին պատկանող երեխաներին և հիմնավորի իր ընտրությունը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ,

սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, երեխաների կյանքի իրավիճակի նկարագրությունների օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 6 ժամ
Գործնական աշխատանք 4 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Իմանալ երեխաների պաշտպանության հիմնական ծառայությունները.

Կատարման չափանիշներ.

ա. Ճիշտ է թվարկում երեխաների սոցիալական պաշտպանությունն իրականացնող հիմնական ծառայությունները,

բ. Ճիշտ է ներկայանում երեխաների պաշտպանությունն իրականացնող ծառայությունները,

գ. Ճիշտ է ներկայացնում կարիքի կամ ռիսկի բնույթին համապատասխան ծառայությունը կամ ծառայությունների խումբը,

դ. Ճիշտ է ներկայացնում երեխայի պաշտպանությունն իրականացնող տեղական, մարզային և հանարապետական մակարդակները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 10 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, երեխաների սոցիալական պաշտպանությունն իրականացնող ծառայությունների տիպային կանոնադրություններ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 6 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Իմանալ երեխայի և նրա անմիջական շրջապատի (ընտանիք, խնամողներ և այլն) հետ շփվելու, հաղորդակցվելու կարողությունները և կարողանալ դրանք գործնականում կիրառել.

Կատարման չափանիշներ.

ա. Կարողանում է վստահություն ձեռք բերել երեխայի և նրա անմիջական միջավայրի հետ հաղորդակցվելիս,

բ. Ճիշտ է ներկայացնում երեխաների հետ աշխատանքային սահամանափակումներն ու դժվարությունները,

գ. կարողանում է կիրառել խաղի, նկարի, առանձին վարժանքների մեթոդները երեխաների հետ աշխատանքում,

դ. Ճիշտ է ներկայացնել երեխաների իրավունքները, ծնողների, խնամողների ծնողավարության կարողությունները, պայմանավորող գործոնները, առանձին ծառայությունների երաշխիքները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 10 հարցից բաղկացած թեստային առաջադրանք և գործնական առաջադրանք, որտեղ կներկայացվեն երեք երեխաների կյանքի նկարագրերը: Ուսանողը պետք է մշակի գործողությունների ընթացք, որը կապահովի երեխայի մոտ վստահության ձեռք բերում, ընտրի յուրաքանչյուր երեխայի հետ վարժանքների անցկացման անհատական մեթոդները և նկարագրի այդ մեթոդների իրականացման ընթացքը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը :

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, երեխաների երեխաների կյանքի նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 6 ժամ

Ուսումնառության արդյունք 5. Իմանալ ընտանիքի հետ սոցիալական աշխատանքի հիմնական առանձնահատկությունները և կարողանալ ճանաչել և գնահատել ընտանիքը.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է սահմանում է ընտանիքի կառուցվածքը և ֆունկցիաները,

բ. Ճիշտ է ներկայացնում և տարբերում է ընտանիքի դերերը, բնութագրում ցանկացած տիպի ընտանիքի դերին բնորոշ վարքը,

գ. Ճիշտ է ներկայացնում և տարբերակում ընտանքի վարքի կանոնները, փոփոխություններին հարմարվելու ուղիները, ծեսերը, գաղտնիքները, արգելված թեմաներն ու տաբուները,

դ. Ճիշտ է ներկայացնում ավանդական և ժամանակակից ընտանքի փոխակերպումները,

ե. Ճիշտ է ներկայացնում և ճանաչում ընտանեկան սոցիալական ռիսկերը,

զ. Ճիշտ է բնութագրում և գնահատում ռիսկերի ազդեցությունը,

է. Կարողանում է ճանաչել և բնութագրել ոչ լիարժեք և սոցիալապես անապահով ընտանիքներին:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք և գործնական առաջադրանք, որտեղ կներկայացվեն երեք ընտանիքների կյանքի նկարագրերը: Ուսանողը պետք է ներկայացնի ընտանիքի կառուցվածքը, ընտանիքում առկա սոցիալական ռիսկերը և գնահատի այդ ռիսկերի հարավոր հետևանքները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, ընտանիքների կյանքի նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 8 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

Ուսումնառության արդյունք 6. Կարողանալ ուսումնասիրել ընտանիքը և նրա հիմնախնդիրները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում ընտանեկան կյանքի փուլերն ու ճգնաժամերը,

բ. Կարողանում է առանձնացնել ընտանեկան համակերգերն ու ենթահամակարգերը,

գ. Ճիշտ է ներկայացնում ընտանիքի ներքին և արտաքին փոխհարաբերությունները,

դ. կարողանում է կազմել ընտանքի սոցիալական պատմությունը,

ե. Կարողանում է կազմել ընտանիքի գենոգրամ և էկոգրամ,

զ. Կարողանում է կատարել ընտանիքի սոցիալական խնդիրների, կարիքների գնահատում:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 10 հարցից թեստային բաղկացած առաջադրանք և գործնական առաջադրանք, որտեղ կներկայացվեն երկու ընտանջքների կյանքի նկարագրերը: Ուսանողը պետք է կազմի այդ ընտանջքների սոցիալական պատմությունը, գենոգրաման և էկոգրաման:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, ընտանիքների պատմության, գենոգրամների և էկոգրամների օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 8 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

Ուսումնառության արդյունք 7. Իմանալ ընտանիքին սոցիալական աջակցության տրամադրաման սկզբունքները և կարողանալ գործնականում տրամադրել այդ աջակցությունը.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է սահմանում ընտանիքին սոցիալական աջակցության տրամադրման նպատակն ու խնդիրները,

բ. Ճիշտ է թվարկում սոցիալական պաշտպանությունն իրականացնող հիմնական ծառայությունները,

գ. Կարողանում է տարբերակել սոցիալական աջակցություն և սոցիալական պաշտպանությունն իրականացնող ծառայությունները,

դ. Կարողանում է տարբերակել ընտանիքի կարիքին կամ ռիսկի բնույթին համապատասխան ծառայությունը կամ ծառայությունների խումբը,

ե. Ճիշտ է սահմանում և բնութագրում է ընտանեկան աջակցության հիմնական տեսակները (զարգացնող, կոմպենսացնող, պաշտպանող ընտանեկան աջակցություններ),

զ. Ճիշտ է ներկայացնում ընտանիքի կարիքներին համապատասխան աջակցության կազմակերպման փուլերը,

է. Ճիշտ է ներկայացնում գործիքային և էմոցիոնալ աջակցություն տրամադրելու տեխնիկայի սկզբունքները,

ը. Կարողանում է աջակցության կարիք ունեցող ընտանիքին տրամադրել կոնկրետ տեղեկատվություն կամ առաջարկել գործնական օգնություն,

թ. Ճիշտ է ներկայացնում ընտանիքի կամ նրա առանձին անդամի (անդամների) վիշտը և տառապանքը:

ժ. Ճիշտ է ներկայացնում էմպատիաի (ապրումակցման) սկզբունքները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք և գործնական առաջադրանք, որտեղ կներկայացվեն երկու ընտանիքների կյանքի նկարագրերը: Ուսանողը պետք է մշակի յուրաքանչյուր ընտանիքի համար համապատասխան սոցիալական ծառայությունների փաթեթ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, ընտանիքների կյանքի նկարագրությունների օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 8 ժամ

Գործնական աշխատանք 6 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԱՐԵՑՆԵՐԻ և ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը ՍՍ – 4 –10– 014

Մոդուլի նպատակը. Մոդուլի նպատակն է տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ձևավորել տարեցների և հաշմանդամների հետ սոցիալական աշխատանքի գործընթացի և առանձնահատկությունների մասին, ծանոթացնել տարեցների և հաշմանդամների սոցիալական պաշտպանություն և սոցիալական աջակցություն իրականացնող հիմնական ծառայություններին:

Մոդուլի տևողությունը 84 ժամ

Տեսական պարապմունքներ 46 ժամ

Գործնական աշխատանք 38 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՍՍ – 4 – 09 – 007«Սոցիալական աշխատանքի հիմունքներ», ՍՍ – 4 – 09 – 008 «Սոցիալական աշխատանքի ուղղություններ» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանալ տարեց հասակի առանձնահատկությունները և տարեց հասակը ներկայացնող տեսությունները:

2. Իմանա տարեց մարդկանց սոցիալական խնդիրները և կարողանալ կատարել սոցիալական աշխատանքի միջամտություն:

3. Իմանա հաշմանդամության առանձնահատկությունները:

4. Կարողանա ուսումնասիրել և միջամտել հաշմանդամության հիմնախնդրին.

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Իմանալ տարեց հասակի առանձնահատկությունները և տարեց հասակը ներկայացնող տեսությունները.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է սահմանում «տարեց հասակ» հասկացությունը և ներկայացնում է դրա տարիքային սահմանները,

բ. Ճիշտ է ներկայացնում «տարեց» և «կենսաթոշակառու» հասկացությունները,

գ. Ճիշտ է ներկայացնում տարեց մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերը և խտրականության դրսևորումները,

դ. Ճիշտ է ներկայացնում տարեց հասակը մեկնաբանող սոցիալական տեսությունները,

ե. Ճիշտ է ներկայացնում տարեցների սոցիալական կարևորությունը հասարակությունում,

զ. Ճիշտ է ներկայացնում տարեցների հետ սոցիալական աշխատանքի պատմական զարգացումը,

է. Ճիշտ է ներկայացնում տարեցների նկատմամբ իրականացվող ժամանակակից սոցիալական քաղաքականության ձեռքբերումները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, տարեցների մասին ՀՀ օրենքը և տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունների վերաբերյալ այլ իրավական ակտեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 14 ժամ

Գործնական աշխատանք 12 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Իմանալ տարեց մարդկանց սոցիալական խնդիրները և կարողանալ կատարել սոցիալական աշխատանքի միջամտություն.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ ներկայացնում տարեցների հետ սոցիալական աշխատանքի նպատակները,

բ. Ճիշտ է ներկայացնում տարեցների հետ սոցիալական աշխատանքի խնդիրները,

գ. Կարողանում է միջամտել տարեց մարդկանց մոտ առաջացող խնդիրներին (աղքատություն, առողջապահական խնդիրներ, ընտանեկան կոնֆլիկտներ, խնամքի կարիք),

դ. Ճիշտ է ներկայացնում տարեցների հետ տարվող սոցիալական աշխատանքի ձևերը,

ե. Ճիշտ է ներկայացնում հաստատություններում տարեցների հետ սոցիալական աշխատանքի կազմակերպման ձևերը,

զ. կարողանում է մատուցել տարեցներին տնային խնամքի ծառայություններ,

է. կարողանում է բացահայտել, առանձնացնել և ներկայացնել տարեցների հետ սոցիալական աշխատանքում առաջացող խնդիրները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք, ինչպես նաև կհանձնարարվի գործնական առաջադրանք որում կտրվեն երեք տարբեր տարեցների կյանքի նկարագրեր: Ուսանողը պետք է ճիշտ ներկայացնի նրանցից յուրաքանչյուրի հետ տարվող անհրաժեշտ սոցիալական աշխատանքի փուլերը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, տարեցների կյանքի նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	10 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Իմանալ հաշմանդամության առանձնահատկությունները.

- Կատարման չափանիշներ
 - ա. Ճիշտ է նկարագրում հաշմանդամության երևույթը,
 - բ. Ճիշտ է սահմանում հաշմանդամությունը,
 - դ. Ճիշտ է բնութագրում և համեմատում «հաշմանդամություն», «սահմանափակ կարողություն» և «հատուկ կարիք» հասկացությունները,
 - ե. Ճիշտ է սահմանում հաշմանդամության խմբերն ու հաշմանդամության հիմնախնդիրները,
 - զ. Ճիշտ է ներկայացնում և թվարկում հաշմանդամության տեսակները (բնածին և ձեռքբերովի) և յուրաքանչյուր տեսակին բնորոշ խնդիրները,
 - է. Ճիշտ է ներկայացնում Հայաստանում հաշմանդամների սոցիալական պաշտպանության հնարավորությունները,
 - ը. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամների նկատմամբ իրականացվող ժամանակակից սոցիալական քաղաքականության ձեռքբերումները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 10 հարցից բաղկացած թեստային առաջադրանք: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80 %-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, հաշմանդամության վերաբերյալ ՀՀ –ում ընդունված իրավական ակտեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	10 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Կարողանալ ուսումնասիրել և միջամտել հաշմանդամության հիմնախնդրին.

- Կատարման չափանիշներ
 - ա. Կարողանում է ընթացքավորել հաշմանդամության անհատական վերականգնողական ծրագիրը,
 - բ. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամների հարմարողական հիմնախնդիրները,
 - գ. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամների բուժման, վերականգնողական և զբաղվածության խնդիրները,
 - ե. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամ ունեցող ընտանիքների խնդիրները,
 - զ. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամների և նրանց ընտանիքների հետ աշխատանքի ձևերը և իրականացվելիք դերերը,
 - է. կարողանում է ներկայացնել հաշմանդամների հետ աշխատող բազմամասնագիտական թիմի աշխատանքներին սոցիալական աշխատողի մասնակցության ձևերը
 - ը. Ճիշտ է ներկայացնում հաշմանդամության հիմնախնդրին միջամտող պետական և հասարակական կառույցների գործունեությունը,
 - թ. կարողանում է բնութագրել հաշմանդամի կարիքները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք, ինչպես նաև կհանձնարարվի գործնական առաջադրանք, որում կտրվեն երեք տարբեր հաշմանդամների կյանքի նկարագրեր: Ռ-սանողը պետք է ճիշտ ներկայացնի նրանցից յուրաքանչյուրի հետ տարվող անհրաժեշտ սոցիալական աշխատանքի փուլերը և սոցիալական աջատողի կողմից միջամտության ձևերը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, հաշմանդամների կյանքի նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	12 ժամ
Գործնական աշխատանք	10 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՅԱՆՔԻ ՂԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը ՄԱ - 4 -10 - 015

Մոդուլի նպատակը. Մոդուլի նպատակն է ուսանողների մոտ տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ձևավորել խոցելիության և դրա ազդեցության, կյանքի դժվար իրավիճակում հայտնված մարդկանց, խոցելի խմբերի հետ սոցիալական աշխատանքի կազմակերպման ձևերի, առանձնահատկությունների վերաբերյալ:

Մոդուլի տևողությունը 36 ժամ

Տեսական պարապմունքներ	20 ժամ
Գործնական աշխատանք	16 ժամ

Մուտքային պահանջներ Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՄԱ - 4 - 09 – 007 «Սոցիալական աշխատանքի հիմունքներ», ՄԱ – 4 – 09 – 008 «Սոցիալական աշխատանքի ուղղություններ» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է

1. Իմանա «կյանքի դժվար իրավիճակ» հասկացության նշանակությունը և սոցիալական աշխատանքի միջամտության անհրաժեշտությունը:
2. Իմանա խոցելի խմբերի հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները.

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Իմանալ «կյանքի դժվար իրավիճակ» հասկացության նշանակությունը և սոցիալական աշխատանքի միջամտության անհրաժեշտությունը.

Կատարման չափանիշներ.

- ա. ճիշտ է սահմանում «կյանքի դժվար իրավիճակ» հասկացությունը,
- բ. ճիշտ է սահմանում և բնութագրում սոցիալական խոցելիությունը,
- դ. ճիշտ է ներկայացնում «կյանքի դժվար իրավիճակ» և «սոցիալական խոցելիություն» հասկացությունների տարբերությունները,
- զ. ճիշտ է բնութագրում կյանքի դժվար իրավիճակում հայտնված մարդու կարիքները,
- ե. ճիշտ է ներկայացնում կյանքի դժվար իրավիճակում հայտնված մարդկանց խմբերը,
- զ. ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատողի գործունեության առանձնահատկությունները խոցելի խմբերի հետ աշխատանքում:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 10 հարցից բաղկացած թեստային առաջադրանք, ինչպես նաև կհանձնարարվի գործնական առաջադրանք որում կտրվեն առնվազը հինգ սոցիալական խմբերի

նկարագրերը: Ուսանողը պետք է ճիշտ տարանջատի, թե այդ խմբերից որոնք են կյանքի դժվար իրավիճակում հայտնվածները, որոնք ունեն սոցիալական խոցելիություն և որոնք չունեն սոցիալական միջամտության որևէ կարիք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80 %-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, սոցիալական խմբերի նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	10 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Իմանալ խոցելի խմբերի հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները.

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է ներկայացնում իրավախախտների հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները

բ. ճիշտ է ներկայացնում կանանց խոցելի խմբերի հետ (բռնության, թրաֆիքինգի գոհեր, գործազուրկ կանայք, միայնակ մայրեր, վերարտադրողական առողջության խնդիրներ) սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները,

գ. ճիշտ է ներկայացնում փախստականների հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները,

դ. ճիշտ է ներկայացնում աղետյալների հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները,

ե. ճիշտ է ներկայացնում էթնիկ խմբերում սոցիալական աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 10 հարցից բաղկացած թեստային առաջադրանք, ինչպես նաև կհանձնարարվի գործնական առաջադրանք, որում կտրվի փախստականների կամ աղետյալների ընտանիքի նկարագիր, որի հիման վրա ուսանողը կներկայացնի սոցիալական աշխատողի կողմից իրականացվելիք գործողությունների հաջորդականությունը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 80%-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, փախստականների և աղետյալ ընտանիքների նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	10 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

ՄՈՂՈՒԼՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՀԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը ՄԱ - 4 - 10 - 016

Մոդուլի նպատակը Մոդուլի նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ և գործնական կարողություններ գործազուրկներին սոցիալական ծառայությունների մատուցման ժամանակ:

Մոդուլի տևողությունը	66 ժամ
Տեսական պարապմունքներ	38 ժամ
Գործնական պարապմունք	28 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՍ – 4 – 09 – 007 «Սոցիալական աշխատանքի հիմունքներ», ՄՍ – 4 – 09 – 008 «Սոցիալական աշխատանքի ուղղություններ» մոդուլները:

Ուսումնաստության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանա զբաղվածության պետական ամենամյա ծրագրերի ձևավորման ընթացակարգը և կարողան ներկայացնել իրականացվող հիմնական ծրագրերը:

2. Կարողանա ներկայացնել աշխատաշուկայի հետազոտության հիմնական ցուցանիշների և գործիքները:

3 Կարողան ներկայացնել ժողովրդագրական իրավիճակի գնահատման ցուցանիշները և դրանց ազդեցությունը զբաղվածության և սոցիալական պաշտպանության այլ ոլորտների վրա.

4. Իմանա աշխատանքի պայմանների և աշխատավարձի սահմանման պետական քաղաքականությունը :

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնաստության արդյունք 1. Զբաղվածության պետական ամենամյա ծրագրերի ձևավորման ընթացակարգը և այդ շրջանակներում իրականացվող հիմնական ծրագրերի ներկայացում.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում զբաղվածության ապահովման և աշխատաշուկայի ուսումնասիրության դերը և նշանակությունը,

բ. Ճիշտ է ներկայացնում աշխատանք փնտրող չբաղված անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման աշխատանքները, դրանց դերը և նշանակությունը,

գ. Ճիշտ է ներկայացնում աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպման աշխատանքները, դրանց դերը և նշանակությունը,

դ. Ճիշտ է ներկայացնում երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայությունների կազմակերպման աշխատանքները, դրանց դերը և նշանակությունը,

ե. Ճիշտ է ներկայացնում թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպման գործընթացը և նշանակությունը,

զ. Ճիշտ է ներկայացնում աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայությունների մատուցման դերը և նշանակությունը,

է. Ճիշտ է ներկայացնում վարձատրվող հասարակական աշխատանքների կատարման հետ կապված ծառայությունների մատուցման գործընթացները, դրանց դերը և նշանակությունը,

ը. Կարողանում է հաշվարկել տարբեր դեպքերի համար գործազրկության նպաստը,

թ. Ճիշտ է ներկայացնում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չբաղված հաշմանդամներին ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացը, դրա դերը և նպատակը,

ժ. Ճիշտ է ներկայացնում աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման տրամադրման գործընթացը, դրա դերը և նպատակը,

ժա. Ճիշտ է ներկայացնում այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցման գործընթացը, դրա դերը և նպատակը,

ժբ. Կարողանում է համաձայն սահմանված նորմերի հաշվարկել վարձատրվող հասարակական աշխատանքներին մասնակցած գործազուրկներին տրվող աշխատավարձը, ինչպես նաև առանձին համայնքներին տրամադրվող ֆինանսավորման միջոցների ծավալները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք, ինչպես նաև կհանձնարարվի գործնական առաջադրանք որևէ համայնքում վարձատրվող հասարակական աշխատանքներին գործազուրկների մասնակցության համար վճարվող աշխատավարձի հաշվարկի վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75%-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, սլայդներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, կազմակերպությունների վերաբերյալ իրավիճակային նկարագրերի տեքստեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 12 ժամ
Գործնական աշխատանք 10 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Աշխատաշուկայի հետազոտության հիմնական ցուցանիշների և գործիքների ներկայացում.

Կատարման չափանիշներ.

ա. Ճիշտ է ներկայացնում աշխատաշուկայի հետազոտման հիմնական ցուցանիշները՝

- գործազրկության մակարդակ՝ ըստ սեռա-տարիքային և տարածքային բաշխվածության ու կրթության մակարդակի,

- զբաղվածության մակարդակը, այդ թվում ինքնազբաղվածները և նրանց բաշխումը ըստ սեռա-տարիքային և տարածքային բաշխվածության ու կրթության մակարդակի,

- տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակը և նրանց բաշխումը ըստ սեռա-տարիքային և տարածքային բաշխվածության ու կրթության մակարդակի,

- այլ ցուցանիշներ:

բ. Ճիշտ է ներկայացնում «ՀՀ զբաղմունքների դասակարգիչը», «Մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների ՀՀ դասակարգիչը», «Մասնագիտությունների նկարագրերը» որպես աշխատաշուկայի հետազոտության գործիքներ,

գ. Կարողանում է մշակել պաշտոնի անձնագիր՝ օգտվելով աշխատաշուկայի հետազոտության գործիքներից:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սլայդներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, «ՀՀ զբաղմունքների դասակարգիչը», «Մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների ՀՀ դասակարգիչը», «Մասնագիտությունների նկարագրերը», պաշտոնի անձնագրի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 8 ժամ
Գործնական աշխատանք 6 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Ներկայացնել ժողովրդագրական իրավիճակի գնահատման ցուցանիշների և դրանց ազդեցությունը զբաղվածության և սոցիալական պաշտպանության այլ ոլորտների վրա.

Կատարման չափանիշներ.

ա. Ճիշտ է ներկայացնում ժողովրդագրական իրավիճակի գնահատման հիմնական ցուցանիշները՝

-կրթության ոլորտի ցուցանիշներ,

-բնակչության առողջական վիճակի ցուցանիշներ,

-բնակչության ուրբանիզացիայի և ագլոմերացիայի ցուցանիշներ,

-բնակչության ժողովրդագրական ցուցանիշներ:

բ. Ճիշտ է ներկայացնում ժողովրդագրական իրավիճակի ազդեցությունը զբաղվածության և գործազրկության վրա,

գ. Ճիշտ է ներկայացնում ժողովրդագրական իրավիճակի ազդեցությունը կենսաթոշակային համակարգի վրա:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:
Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, ժողովրդագրական իրավիճակի վերաբերյալ ՀՀ ազգային վիճակագրական վարչության տվյալներ, ՀՀ կենսաթոշակային համակարգի վերաբերյալ իրավական ակտեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	10 ժամ
Գործնական աշխատանք	6 ժամ

Ուսումնառության արդյունք 4. Աշխատանքի պայմանների և աշխատավարձի սահմանման պետական քաղաքականության իմացություն.

Կատարման չափանիշներ.

ա. Ճիշտ է ներկայացնում աշխատանքի պայմանների ապահովման հարցում գործատուների պարտականությունները և իրավունքները,

բ. Ճիշտ է ներկայացնում պետական մարմինների կողմից աշխատանքի պայմանների վերահսկման պայմանները,

գ. Ճիշտ է ներկայացնում նվազագույն աշխատավարձ հասկացողությունը և աշխատավարձերի տեսակները,

դ. Ճիշտ է ներկայացնում աշխատավարձի կառուցվածքը և ձևավորման սկզբունքները պետական և ոչ պետական կազմակերպություններում:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային առաջադրանքի հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, ինչպես նաև աշխատավարձի վերաբերյալ նախորդ տարիների համար ՀՀ ազգային վիճակագրական վարչության տվյալներ, նվազագույն աշխատավարձի մասին ՀՀ օրենքը, քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին օրենքը, իրավական ակտեր կապված աշխատանքի անվտանգ պայմանների և աշխատողների առողջության պահպանության հետ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ	8 ժամ
Գործնական աշխատանք	6 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը ՄԱ - 4 - 10 - 017

Մոդուլի նպատակ. Մոդուլի նպատակն է սովորողին տալու գիտելիքներ կառավարման մեթոդաբանության և սկզբունքների, սոցիալական ոլորտի կազմակերպությունների ներքին և արտաքին միջավայրերի, կառավարման մեթոդների, պլանավորման, կազմակերպման, մոտիվացիայի և վերահսկողության իրականացման վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել անձնակազմի շահադրդման մեթոդներ կիրառելու և ոլորտում բիզնես պլան կազմելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը 66 ժամ

Տեսական պարապմունքներ 30 ժամ

Գործնական աշխատանք 36 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է

1. Իմանա կազմակերպությունների իրավակազմակերպական ձևերը, դրանց ստեղծման

ընթացակարգը, կառավարման իրականացման առանձնահատկությունները և սկզբունքները, անձնակազմի շահադրդման (մոտիվացիայի) բարձրացման եղանակները:

2. Իմանալ կառավարման մեթոդները և կառավարման գործառնությունների իրականացման

կարգը և կառավարման արդյունավետության բարձրացման հնարավորությունները:

3. Կարողանալ կազմել բիզնես պլան:

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Կազմակերպությունների իրավակազմակերպական ձևերի, դրանց ստեղծման ընթացակարգի, կառավարման իրականացման առանձնահատկությունների և սկզբունքների, անձնակազմի շահադրդման (մոտիվացիայի) բարձրացման եղանակների իմացություն.

Կատարման չափանիշներ.

ա. Ճիշտ է ներկայացնում կազմակերպությունների իրավակազմակերպական ձևերը, դրանց ստեղծման ընթացակարգը,

բ. Ճիշտ է ներկայացնում կազմակերպությունների կառավարման առանձնահատկությունները և կառավարման մարմինները,

գ. Ճիշտ է կիրառում անձնակազմի շահադրդման (մոտիվացիայի) բարձրացման մեթոդները՝ աշխատանքի կազմակերպման և կառավարման ժամանակ:

Գնահատման միջոցը՝

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք, ինչպես նաև կհանձնարարվի գործնական առաջադրանք՝ կապված որևէ կազմակերպության գործունեության հետ: Գործնական առաջադրանքում նկարագրվում է կազմակերպությունում տիրող իրավիճակը և հանձնարարվում է որոշակի շահադրդման մակարդակ ապահովելու համար ներկայացնել առաջարկություններ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային առաջադրանքի հարցերի նվազագույնը 75%-ին և ճիշտ կատարել գործնական առաջադրանքը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, կազմակերպությունների վերաբերյալ իրավիճակային նկարագրերի տեքստեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 10 ժամ

Գործնական աշխատանք 16 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Իմանալ կառավարման մեթոդները և կառավարման գործառնությունների իրականացման կարգը և կառավարման արդյունավետության բարձրացման հնարավորությունները.

Կատարման չափանիշներ.

ա. Ճիշտ է ներկայացնում կառավարման մեթոդները և դրանց կիրառման դեպքերը,

բ. Ճիշտ է ներկայացնում կառավարման գործառնությունները և նշում է դրանց կիրառությունն ապահովող գործիքները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային առաջադրանքի հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, կառավարման գործիքների օգտագործման վերաբերյալ օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 10 ժամ

Գործնական առաջադրանք 10 ժամ

Ուսումնառության արդյունք 3. Կարողանալ կազմել բիզնես պլան.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է հաշվարկում կառավարման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները,

բ. Ճիշտ է կազմում պարզագույն բիզնես պլան:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվեն երկու գործնական առաջադրանք: Դրանցից առաջինում կազմակերպության վերաբերյալ բերված տվյալների հիման վրա ուսանողը հաշվարկում է կառավարման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները՝ կապիտալի շրջանառության տեմպը, եկամուտը, եկամտաբերությունը, կադրերի հոսունության գործակիցը: Երկրորդ գործնական աշխատանքի արդյունքում, համաձայն հանձնարարված պայմանների, ուսանողը կազմում է սոցիալական ոլորտի կազմակերպման բիզնես պլան:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է կատարում երկու գործնական առաջադրանքները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, կազմակերպությունների վերաբերյալ իրավիճակային նկարագրերի տեքստեր, կառավարման արդյունավետության ցուցանիշների հաշվարկման և բիզնես պլանների կազմման օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ 10 ժամ

Գործնական աշխատանք 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԿԵԹԻՆԳ»

Մոդուլի դասիչը ՄԱ – 4 – 10 - 018

Մոդուլի նպատակը. Մոդուլի նպատակն է սովորողին տալ մարկեթինգի վերաբերյալ տեսական գիտելիքներ, որոնք կնպաստեն սոցիալական ծառայությունների մատուցման արդյունավետության տեսանկյունից շուկայի ուսումնասիրությանը, ծառայությունների մատուցման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Մոդուլի տևողությունը 54 ժամ

Տեսական պարապմունքներ 28 ժամ

Գործնական աշխատանք 26 ժամ

Մուտքային պահանջներ. Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքներ. Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանա շուկայական տնտեսության առանձնահատկությունները սոցիալական ոլորտում:
2. Իմանա սոցիալական ոլորտում կազմակերպության, որպես տնտեսվարող սուբյեկտի դերը և նշանակությունը:

Գնահատման կարգը.

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1. Իմանալ շուկայական տնտեսության առանձնահատկությունները սոցիալական ոլորտում.

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ոլորտի (սոցիալական պաշտպանություն, կրթություն, առողջապահություն) կազմակերպությունների զարգացման առանձնահատկությունները շուկայական տնտեսության պայմաններում,

բ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ոլորտի կազմակերպությունների նյութատեխնիկական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների ձևավորման սկզբունքները կախված կազմակերպության պետաիրավական կառավարման ձևերից,

գ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ոլորտի աշխատանքի շուկան,

դ. Ճիշտ է ներկայացնում ոլորտի տնտեսական հիմնական ցուցանիշները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային առաջադրանքի հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների և դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ,

Տեսական պարապմունքներ 14 ժամ

Գործնական աշխատանք 10 ժամ

Ուսումնառության արդյունք 2. Իմանալ սոցիալական ոլորտում կազմակերպության, որպես տնտեսվարող սուբյեկտի դերը և նշանակությունը.

Կատարման չափանիշներ.

ա. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ոլորտի կազմակերպությունների ձևերը և կազմակերպա իրավական կառուցվածքը,

բ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ոլորտի կազմակերպությունների ենթակառուցվածքները և դրանց ֆինանսական միջոցների ձևավորման սկզբունքները,

գ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ոլորտի կազմակերպությունների հիմնական և շրջանառու միջոցները,

դ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ոլորտի կազմակերպության աշխատանքային ռեսուրսների, աշխատանքի նորմավորման, աշխատավարձի վճարման սկզբունքները,

ե. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ոլորտի կազմակերպության կողմից իրականացվող շուկայի հետազոտության (մարկեթինգի) սկզբունքները,

զ. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ոլորտի կազմակերպության արտադրական ծախսերի, մատուցվող ծառայությունների ինքնարժեքի, ծառայությունների գնագոյացման սկզբունքները,

է. Ճիշտ է ներկայացնում սոցիալական ոլորտի կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների որակի գնահատման, ծառայությունների մրցունակության, ինչպես նաև կազմակերպության գործունեության արդյունավետության գնահատման սկզբունքները և մեթոդները:

Գնահատման միջոց.

Ուսանողին կտրվի 15 հարցից բաղկացած թեստային առաջադրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեստային առաջադրանքի հարցերի նվազագույնը 75%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ.

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների և դասախոսությունների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ցուցապաստառներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության նկարագրերի օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ.

Տեսական պարապմունքներ

14 ժամ

Գործնական աշխատանք

16 ժամ